


2366



2011

Ладыжину и Степану Маркелову

78a.

Արտատպած ԹԱՏՐՈՆ հանդիսից № 3

Rhetor

1896 p. 3/III

ՀԱՅԹԱՎԵԿՈՍ ՎԱՆ ԲԵԹՀՈՎԵՆ

Վիկտոր Ուլդեր-ի ընդարձակ աշխատովթիւնից

Կազմից

(330)

ՕՐ. ՄԱՐԳԱՐԵՏ ԲԱԲԱՅԵԱՆ

(ՆՈՒԷՐ ԲԺՇԿ. Ա. Բ-ԻՆ)

1003
21056



Արագ. տպար. Մ. Մարտիրոսեանցի եւ Ըսկ.
Միքայէլեան փող. տուն № 81.

2004

ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐ ԻՄ

Դօվ. Պենզ., Տիֆլոս, 9-րդ Մայ, 1895 թ.

Երբ ՎԻԼԴԵՐԻ նշանաւոր գրքից
կազմում էի այս փոքրիկ կենսագրու-
թիւնը՝ 1894 թ. ապրիլի 7-ին տօնդ
շնորհաւորելու համար, երբէք չէի կա-
րող մտքովս անցնել, թէ մի օր լոյս
կըտեսնի. Բայց դու ինձ քաջալերեցիր
եւ հետաքրքրական համարեցիր ո՛չ
միայն փոքրիկ ընտանեկան շրջանի
մէջ կարդալ, այլեւ հայ երաժշտա-
սէրների աւելի լայն շրջանում։ Սիրտ
առնելով ահա այդ խօսքերիցդ, որո-
շեցի լոյս ընծայել իմ այս առաջին
փորձը իւր բոլոր թերութիւններով
եւ նուիրել քեզ։

Զու Մարգարիտ:

29705-Ա.Ի.

13370-Ծ

ԼՈՒԺՈՎԻԿԱՆ ՎԵՆ ԲԵԹՅՈՎԻՆ

I

ԲԵԹՅՈՎԻՆի ծագումը: Տաղանդաւոր մանուկի անձնութիւնները: ԲԵԹՅՈՎԻՆը Մոցարտի մօտ: Նա իւր ընտանիքի հայրն է: Վերջին տարիները Բոննում:

Գերմանիայի տաղանդաւոր բանաստեղծներից երգուած Հռենոս գետի ափին գտնւում է Բոննը, որ 18-րդ դարու վերջի քառորդին հազիւ թէ 10,000 բնակիչ ունենալը և Կեօնի արքեպիսկոպոսների աթոռանիստագաղաքն էր: Բոննի արքեպիսկոպոսներն, իրեւ գերմանական նորընտառ կայսրութիւնի թագագիրներ՝ վարթամ և ազատ կեանք էին վարում: Աիրում էին գեղարված աշխատանքներ, մասնաւոր աշխատանքներ, ուստի այս աշխատանքների առաջնային աշխատանքները կայսեր էին պատճեն առաջնային աշխատանքները:

Այդ հովանաւորուած արուէստագէտներից մինն է լինում նաև Լուդովիկոս

Վան Բեթհովէնը, որի նախնկքը ֆլամանդացի գիւղացիներ էին: Դա մի եռանդում, հաստատակամ և չնորհալի երիտասարդ էր, որ քաղաքէ քաղաք շրջելով և հետզետէ կատարելագործուելով վերջապէս հասնում է գերմանական սահմանին, ընդունում Բոնի արքեպիսկոպոս Կիմենտ Օգոստոսի մօտ և կարճ ժամանակամիջոցում հոչակ ստանալով նրա երաժիշտների ղեկավարն է նշանակվում: Սակայն Բեթհովէնը իւր ընտանեկան կեանքի կողմից շատ դժբաղտ էր, որովհետև կինը մոլի և արքեցող էր: Այդ սարսափելի ախտը իւր մօրից ժառանգեց նրա միակ որդի ծանը, որ մանկութիւնից արդէն ընդունուած էր պալատի եկեղեցու երգեցիկ խմբի մէջ, առանց վարձատրութեան: Երբ Փանը 21 տարեկան է դառնում և իւր հօր խնդրանօք նրան 100 տալեր թոշակ է նշանակվում, նա վճռում է ամուսնանալ: Քիթառան (փանդիւն, չոնգուրը) ձեռքն առնելով նա սկսում է գիւղէ գիւղ պտտել և իւր բոմանսներով (քնարական գիւցազներգութիւն) գեղեցկուհիների սիրտը գրա-

ւել: Թափառելիս նա ծանօթանում է մի գեղեցկատեսիլ մանկամարդ այլիկ՝ Մարիամ Մագդաղինէ կեմերիխի հետ, որ պալատական սպասաւորի աղջիկ էր և ամուսնանում:

Նորապսակները Բոնգասսէ կոչուած փողոցում մի բնակարան են վարձում, ուր ծնում է նրանց անդրանիկ զաւակը, որից և շուտով զրկում են: Երկրորդ որդին, որ 1770 թուակ. դեկտեմբերի 16-ին է աշխարհ դախիս, Լուգովիկոսն է լինում, 19-րդ դարու երաժշտական աշխարհի տիեզերական փայլուն աստղերից մինը:

Տիսուր և տրտում էին անցնում տաղանդաւոր մանկան օրերը: Երեք տարեկան հասակում նա զրկում է իւր սիրելի պապից, որ շատ էր փայփայում փոքրիկ մանուկին: Երեկոները մայրը իւր գիրկն առնելով երեխային պատմում էր, թէ որքան մհծ մարդ է եղել նրա պապը և մօր պատմածները այնպիսի խորը տպաւորութիւն են թողնում Լուգովիկոսի վրայ, որ սրավը դառնում է թուան անմերձնալի իդէալը, որի աստի-

հասնին հասնելու տեհնչանքը նոյն իսկ մանկութիւնիցն է նրա մէջ սկսում զարթնել:

Լուգովիկոսը չորս տարեկան է լինում, երբ հայրը սկսում է նրա հետերաժշտութեամբ պարապել. նա մանուկին ժամերով ստիպում էր դժուար վարժութիւններ նուագել, այնպէս որ այդ դասերը երեխայի համար տաժանելի լինելով՝ գրեթէ հասնում էին անգթութեան:

Բայց չնայած այդ խիստ վարմունքին՝ մանուկը զարմանալի յառաջադիմական քայլեր է անում և հայրը այդ բանը նկատելով, որոշում է մի տևելի հմուտ ուսուցիչ որոնել: 1777 թուակ. Բեթհովէնների տանը Փփէյֆէր ազգանունով մի պալատական երգիչ էր ապրում, քաջ հմուտ կլասեսինին *), որին և հրաւիրում է հայրը իւր որդու ուսուցիչ: Ժան Բեթհովէնը Փփէյֆէրի հետ միասին մինչև խորը կէս զիշերը սպանդոկներում անց-

*) երաժշտական մի գործիք, որ այն ժամանակ գործածութեան մէջ էր:

նելուց յետոյ, երբ հարբած տուն էին վերադառնում, մտարերում էին, որ աշակերտը առանց դասի է մնացել: Հայրը գնում զարթեցնում էր խեղճքնած մանկան, որ քնից յաղթահարուած չէր կամենում վեր կենալ և բռնի նստեցնում կլաւեսինի առջև:

Բեթհովէնի կենսագիրներից շատերն այն կարծիքն են յայտնում, թէ միայն հօր այդպիսի խիստ միջոցների չնորհիւն է, որ որդու տաղանդը այդ սատիճանի կատարելութեան հասաւ: Բայց երբ ի նկատի առնենք այն բոլոր հոգեկան տանջանքները, որ կրել է երեխան երաժշտութեան պատճառով, պէտք է զարմանանք, թէ որչափ մեծ պիտի լինէր նրա սէրը զէպի իւր արուեստը, որ արիութիւն տուալ նրան այդպիսի ծանր գալրոցին տոկալու: Միաժամանակ Բեթհովէնը սկսեց ջութակի վրայ ածել սովորել:

Փոքրիկ Լուգովիկոսը այնքան քիչ ժամանակ է ուսումնարան յաճախել, որ հազիւ միայն գրել կարդալ սովորեց: Նրա նամակները լի են տառասխալներով,

իսկ թուաբանութիւնից նրա բոլոր գիտութիւնը ամփոփում էր գումարման և հանման մէջ: Նա ամենքից լաւ էր զգում իւր տգիտութիւնը, որ հօր անհոգութեան հետևանքն էր:

Մի տարուց յետոյ, երբ Փֆէյֆէրը հեռանում է Բոննից, Լուդովիկոսի հետ սկսում է պարապել հանգուցեալ Բեթհովենի ընկերը, արդէն ծերունի պալատական երգիոնահար (օրգանիստ) Վանդէր-Եզէնը, որին 1779 թուակ. փոխարինում է Խրիստոֆ-Գօտլօբ-Նեֆէն՝ այն ժամանակուայ նշանաւոր երաժիշտներից մինը: Դա է Լուդովիկոսի երաժշտագրութեան (կոմպոզիցիայի) առաջին ուսուցիչը:

Լուդովիկոսը հազիւ 13 տարեկան պատանի էր, երբ Նեֆէն միառժամանակ Բոննից բացակայելով՝ նրան իւր փոխարէն պաշտօնակատար թողեց: Դիւրին չէր երգիոնահարի պաշտօնը այդ հասակի երեխայի համար, բայց և այնպէս նա արդարացրեց իւր վրայ տաճած յոյսերը և, մի տարի անց, երբ Նեֆէին նուագախմբի ղեկավար նշանակեցին, Բեթհո-

վէնը դարձաւ Մաէստրօ-ալ-ցիմբալօ (maestro al cembalo) այն է՝ նա պիտի ղեկավարէր նուագախումբը թատրոնական փորձերին, և ներկայացումներին կաւեսինի վրայ նուագէր: Սովորական մի պատանու ուժերից վեր եղող այդ աշխատութիւնը արգելք չէր լինում նրան ուսումնասիրել երաժշտութիւնը տեսականապէս և կաւեսինի վրայ ածելը կատարեկագործել:

Սակայն Բեթհովենի մանկութիւնը շատ տրատում էր: Աղքատութիւնը ճնշում էր ամբողջ ընտանիքը, պապից մնացած փոքրիկ ժառանգութիւնը Լուդովիկոսի հայրը վատնել էր, և կանոնաւոր վատակ չունենալով, ընտանիքին գրեթէ սովէ էր սպառնում: Արդ՝ ինչո՞ւ պիտի զարմանալ Լուդովիկոսի իւր հասակին անհամապատասխան մուայլ և մելամաղձոտ բնաւորութեան վրայ: Նա իւր ոյժերից վեր կրած աշխատութեան փոխարէն առանը միայն տիրութիւն և աղքատութիւն է տեսել:

Ամբողջ տարուան ընթացքում նրա միակ ուրախ օրը մօր անուանակոչութիւն է տեսել:

թեան տօնն էր: Այդ օրուան երեկոյին
մայրը, որպէս թէ անգիտակ, ընտանիքի
սովորութեան համաձայն գնում էր վաղ
քնելու: Խսկոյն որդիքը նշան էին տալիս
դուրսը սպասող երաժշտներին և նրանք
տիկնոջ պատուհանի տակ մի սերենադա
էին սկսում: Տիկինը շտատ դուրս էր
գալիս զարմանքով դահլիճը, զարդա-
րուած իւր շքեղ հանդերձով, որ վաղօ-
րօք պատրաստած էր ունենում, որպէս-
զի իմանայ այս հանդէսի պատճառը:
Այդ միջոցին բոլոր հիւրերը ներս էին
խուժում և տիկնոջը մի բարձր գահի
վրայ բազմեցնելով, սկսում էին ի պա-
տիւ նրա յօրինած կտորներ երգել և
նուազել զանազան երաժշտական գոր-
ծիքների վրայ: Սակայն խեղճ կինը այն
աստիճան բարի էր, որ զարմացած էր
ձեւացնում այդ անսպասելի մեծարանք-
ների վերաբերմամբ: Համեստ ընթրիքով
վերջանում էր այդ ընտանելան երա-
ժշտական երեկոյին:

1785 թ. Բեթհովէնը առաջին ան-
գամներկայանում է Մաքսիմիլիան արք-
եպիսկոպոսին: Երկար բաճկոն, կանաչ

մահուդի անդրավարտիկ, սպիտակ մե-
տաքսեայ գանգապաններ, կիսակօշիկներ՝
ու մետաքսեայ ժապաւէններով, սպիտակ
բաճկոնակ, եղբերը ոսկեթել ժապաւէ-
նով կարած, ահա նրա առաջին պալա-
տական զգեստը: Ինքը կարճ, լայնաթի-
կունք, գլուխը սովորականից մեծ, մա-
զերը յետ սանրած, զլխարկը թևի տակ
և սուրը կողքից կախ, այդ փոքրիկ տղա-
մարդը իւր մոայլ դէմքով շատ տարօրի-
նակ տպաւորութիւն թողեց փարթամ
պալատականների վրայ:

Երկու տարի անց՝ Բեթհովէնին յա-
ջողում է ժամանակաւոր արձակուրդ
ստանալ, որից օգտուելով շտապում է
Վիեննա Մօցարտի մօտ: Աւստրիայի
մայրաքաղաքը հասնելուն պէս՝ նա ան-
միջապէս այցելում է մեծ երաժշտին և
ներկայացնում արքեպիսկոպոսի յանձ-
նարարականները: Վերջինս ամենեին չէր
սիրում երիտասարդ տաղանդներին, հա-
մեմատելով նրանց վաղաժամ բացուած
ծաղիկների հետ, և բնականաբար, ընդու-
նելութիւնը սաւոն էր: Վերին աստիճա-
նի բնորոշ է նրանց խօսակցութիւնը.

— Ա՛ն, Մաէստրօ, ինչպէս կը փա-
փագէի ձեզ նման յօրինել, բացականչում
է հիացմունքով Բեթհովէնը:

— Այդ ձեզ համար դեռ վաղ է, սառ-
նասիրտ նկատում է Նրան Մօցարտը:

— Բայց դուք աւելի երիտասարդ էիք,
որ յօրինում էլք:

— Այն, սակայն ես ոչ ոքին չէի հար-
ցնում, թէ ինչպէս պիտի ստեղծագործել:

Այդ պատասխանը արդէն պատկերա-
ցնում է Մօցարտի բնաւորութիւնը և
նրա վարմունքը տաղանդաւոր պատա-
նու հետ: Երբ որ վերջինս սկսեց մի
բաւական դժուար կտոր նուազել, մեծ
երաժիշտն արհամարանքով էր լսում,
ենթադրելով որ երիտասարդի արուես-
տը միայն դրանումն է կայանում: Մա-
կայն Բեթհովէնը զգալով Մօցարտի կաս-
կածը, ինդրեց մի նոր թեմա (նիւթ) տալ
Նրան: Մեծ երաժիշտը մի կտոր նուա-
զեց և Բեթհովէնը յուզուած՝ սկսեց այդ
նիւթի վրայ այնպիսի վարիացիաներ յօ-
րինել, որ Մօցարտը ապշած դուրս գը-
նաց իւր հիւրերի մօտ և ասաց. Լաւ
լսեցէր այդ տղային, շուտով նրա

փառքը ամբողջ տիեզերքը կը դղըր-
դեցնէ:

Լուդովիկոսը նոր էր սկսել Մօցար-
տից դասեր առնել, երբ անակընկալլուր
առաւ Բոննից, որ մայրը մահամերձ հի-
ւանդ է: Նա թողեց պարապմունքը և
անմիջապէս շտապեց առւն, ուր մօրը
գտաւ հոգեվարք գրութեան մէջ: Ընտա-
նիքի գրութիւնը սարսափելի էր, նրա
հայր Ժանը մի քանի անգամ դիմել էր
արքեպիսկոպոսին, բայց ապարդիւն և
կակծից այլս տուն չէր վերադառնում
գինետներում գիշերելով: Խեղճ կինը իւր
կեանքի մէջ առանց որևէ միսիթարանք
վայելելու վախճանուեց: Թաղման կարեւոր
ծալսքերը հոգալու համար Լուդովիկոսը
դիմեց իւր ընկեր Ֆրանց Ռիսին, որը
վեհանձնաբար հայթայթեց ըստ իւր մի-
ջոցների: Այդ մեծահոգութիւնը Բեթհո-
վէնը արտասուքով էր յիշում իւր կե-
նաց մէջ:

Մակայն բարեկամների և ընկերների
յուսով ապրել անհնարին էր և վերջապէս
այդպիսի կեանքը Բեթհովէնի իդէալից
ստոր էր: Նա պիտի հրաժարուէր իւր

դիտաւորութիւններից և բոլոր իւր ուժերը նույիրէք իւր ընտանիքը կերակրելուն: Նա իւր տաղանդը պիտի գործ դնէք միայն մի կտոր հաց վաստակելու համար: Այդպիսով նա դարձաւ իւր ընտանիքի հայրը, որովհետեւ վերջինս գրեթէ կորած էր ընտանիքի համար: Լուգովիկոսը դիմեց արքեպիսկոպոսին, որ հօր ռոռնի կէսը ուղղակի իրեն յանձնեն տունը կառավարելու համար, սակայն հայրը տեղեկանալով որդու այդ մտադրութեանը, եկաւ աղաչեց, որ այդ աստիճանի ստորութեան նրան չհասցնեն և ազնիւ խօսք տուեց տարեկան հարիւր տալէք տալ մանուկներին խնամելու համար:

1792 թուականին վախճանւում է ժանը և Բէթհովէնի նիւթական դրութիւնը աւելի է վատթարանում, սակայն միայն այդ գրութիւնը արիութիւն տուեց նրա ոգուն և ներշնչեց զգացնել տալ աշխարհին այն տանջանքները, որ կրում է մարդկութիւնը, և որոնց նա աւետեց տիեզերքին իւր ստեղծագործութիւններով: Հաւանական է, որ այդ ծանր պա-

րագաներում նոյն իսկ հանճարը ձնշուէք և կորչէք և կը կորչէք էլ, եթէ նա իւր բեղմնաւոր ճանապարհին չպատահէք մի ընտանիքի, ուր նա սփոփանք գտաւ և որի սիրալիր բարեկամական յարաբերութիւնը կատարեալ ազգակցական էր: Դա մի բարձրաստիճան պալատական Բրենինգի այրին էր, որ երեք տղայ և մի աղջիկ ունէր: Վերջինը՝ Ելէօնօրան Բեթհովէնի հասակակիցն էր և նրա աշակերտուհին: Տիկնոջ տունը գեղարուեստի մի փոքրիկ տաճար էր: Այստեղ Բեթհովէնը ծանօթանում է գերմանական և օտար գրականութեան ընտիր գրուածների հետ, հրճում է գասական հեղինակների վեհ գաղափարներով՝ Հոմերոսի, Պլուտարքոսի, իսկ վերջը Շեքսպիրի:

Զքնաղ Ելէօնօրան իւր սիրալիր վարմունքով, արտաքին գեղեցկութեամբ և գրականական խելացի զրոյցներով Բեթհովէնի համար կենդանի մի դպրոց էր, իսկ հաճելի և բարի տիկ. Բրենինզը իւր մայրական քնքշութեամբ դէպի Բեթհովէնը մեղմացնում էր նրա մռայլ մըտքերը և սանձարձակ բնաւորութիւնը:

Այստեղ Լուգովիկոսը առիթ է ունենում ծանօթանալու մի քանի օրիորդների հետ, որոնցից մի քանիսը սաստիկ հանելի էին նրան և բնականաբար յափշտակում է նրանցով: Երիտասարդի այդ տեսակ թեթևամտութիւնը վատ էր ապդում Էլէօնօրայի վրայ և նոյն խսկ այդ պատճառով նրանք խռովել էին միմիանցից: Երբ Լուգովիկոսը Վիեննա է գընում, երեան են գալիս մի քանի նամակներ, որ Էնթառիկնը նրան գրած է եղել մի տարուց յետոյ Վիեննայից: Այդ նամակները լի են սիրային քնքուշութեամբ, նա զղումէ իւր կոպիտ վարմունքը: Այդ գրաւոր փաստաթղթերը կենդանի ապագոյց են, որ Էլէօնօրան է եղել Լուգովիկոսի առաջին սիրոյ էակը:

Արտաքին կողմից նմանապէս բաղդը սկսեց ժպտալ երիտասարդ տաղանդին: Բրենինգի ընտանիքի չնորհիւ նա դասերէ ստանում բազմաթիւ արիստոկրատ գերդաստաններում, թէև նա միանգամյն ատում էր դասերը, պատճառաբանելով, որ դասատւութեան ժամանակ ներով, որ դասատւութեան ժամանակ ներաժտական մտքերը պաշտպում են նրան երաժշտական կոմիտեի կողմէ:

և անուշադիր դարձնում, և ծանօթանում նոյնպէս չնորհալի երաժիշտ կոմս Կարլոս Վալդշտէյնի հետ, որ դառնում է Լուգովիկոսի հովանաւորող բարի հրեշտակը:

Նրանք չափազանց մտերմանում են իրարու հետ և կոմսը լինելով Լուգովիկոսի հանձարի պաշտողներից մինը, ամեն կերպ օժանդակում է նրան, այն էլ շատ քաղաքավարի կերպով, որ չիբրաւորէ հպարտ տաղանդին: Այդպէս նա մի անգամ ընծայում է նրան Շտէնիկի *) դաշնամուրը:

1788 թ., երբ Մաքսիմիլիանը շատ նըշանաւոր արուեստագէտներէր (վիրտուոզ) հրաւիրել իւր նուագախմբի համար, Լուգովիկոսը կատարելով երրորդ ջութակահարի և պալատական երգիոնահարի պաշտօնները, նշանակում է պալատական երաժիշտ (Kammer-musikus): Զնայած իւր բազմաթիւ պարապմունքներին՝ նա ազատ ժամերին զբաղւում է երա-

*) Այն ժամանակուայ ամենալաւ դաշնամուր շինողը:



7/11-1922

ժշտական շարադրութիւններով, իսկ յա-
ճախ իւր ընկեր երաժիշտների հետ այցե-
լում սրճանոցները, սակայն միշտ հեռու
մնալով դինեմոլութիւնից: Բայց առանձ-
նապէս նրան սիրելի էր բնութիւնը և
հնար եղած ըռպէին առիթ էր որոնում
դիւղը փախչելու: Պատմում են, որ մի
անգամ Բեթհովէնը իւր շրջադայութեան
միջոցին մտնում է Գոտեսքերգի գիւղա-
կան փոքրիկ եկեղեցին և սկսում նուա-
գել երգիոնին վրայ. եկեղեցում աղօտ
լոյս էր տիրում, չուրջը խաղաղութիւն,
ոչ մի ձայն: Բեթհովէնը հետզհետէ աւելի
և աւելի ոգեստուելով հրաշալի մեղեդի-
ներ էր հնչեցնում: Այդ միջոցին գիւղա-
ցիք աշխատանքից վերադարձած լինե-
լով, լսում են այդ կախարդիչ ձայները
և շտագում եկեղեցի: Վերջացնելով ըս-
քանչելի նուագումը, Բեթհովէնը զարման-
քով տեսնում է իւր շուրջը ժողովուած
բազմաթիւ ամբոխը, որ գլխաբաց ապ-
շած լսելիս է լինում զմայլեցուցիչ ձայ-
ները և նայում նրան, ինչպէս երկեն-
քից իշածին:

1791 թուակ. արքեպիսկոպոսը տե-

դափոխուում է Մերգենտհէյմ, իւր հետ
տանելով և նուագիխումբը: Ճանապար-
հին, երբ նաև են նստում Հռենոս գետի
վրայ, խումբը որոշում է կարգը պահպա-
նելու համար ներկայացնել Նիբելունգ-
ների արշաւանքը, ուստի երաժիշտնե-
րի միջից նախագահ են ընտրում կոմի-
քական Ծեծ արքային, որ ամեն մէ-
կին մի պաշտօն է յանձնում: Բեթհովէ-
նին ընկնում է խոհարարի օգնականի
պաշտօնը: Այդ ճանապարհորդութեան
ժամանակ Բեթհովէնը ծանօթանում է
արքայ Շտերկելի հետ, որ հոչակաւոր
նրբաճաշակ նուագածու էր. Շտերկելլը
բաւական յաճախ նուագում էր Բեթհո-
վէնի համար և շատ էր ցանկանում նրան
լսել, ուստի խորամանկ միջոցի դիմելով,
ասում է, որ ինքը ճանաչում է Բեթհո-
վէնի վարիացիաները— „Vienni amore“
Իրգինիի նիւթի վրայ գրուած, սա-
կայն ենթադրում է, որ անկարելի է
նուագել: Բեթհովէնը գրգռուած իւր
ինքնասիրութեան հասած վիրաւորանքից՝
անմիջապէս մօտենում է դաշնամուրին
և մեծ է լինում երաժիշտների զարման-

քը, երբ տեսնում են, որ Բեթհովէնը
բոլորովին արբայի ձերով և նրա փափ-
կութեամբ և նրբութեամբ է նուազում:
Մինչդեռ Բեթհովէնի կրակոտ խաղը՝
թէս սովորաբար կոպիտ էր լինում,
բայց վերին աստիճանի ազգու և զգաց-
մունքով լի:

Այդ ճանապարհորդութիւնը ընդ միշտ
տպաւորուեց Բեթհովէնի յիշողութեան
մէջ և խոհարարի օգնականի գլխարկը,
ինչպէս նաև Նեծ արքային սառորագրած
դիմումը յաւիտենական յիշատակներ մը-
նացին: Նրա կենսագիրներից մինը՝ Վիլ-
դէրը նկատում է թէ մի՛ գուցէ նրա
յօրինած բազմաթիւ կտորների համար
այդ գլխարկին ենք պարտական, որ
Բեթհովէնին միշտ պատկերացնում էր
իւր երիտասարդութեան սակաւթիւ
ուրախ օրերից մինը:

Բայց Բեթհովէնին չէր կարող գոհա-
ցումն տալ փոքրիկ լրջանը: Նա զգում էր
իւր մէջ ահազին ոյժ, և ընդարձակ
ասպարէզ էր որոնում: Նրա գլխում յղա-
նում էին և հասունանում էին գաղա-

փարներ, որոնց վեհութիւնը նա սկսում
էր ըմբռնել և վերջը եկաւ այն եղ-
րակացութեան, որ անհրաժեշտ է անց-
նել երաժշտական որոշ խիստ դպրոց,
կատարելագործուելով մեծ արուեստա-
գէտների մօտ: Իւրաքանչիւր օր նա ա-
ւելի էր համոզւում, որ իւր գիտութիւնը
իւր ստեղծագործական տաղանդին. չէ
համապատասխանում, և նրա մտաւոր
հայեացքի առջև կրկին պատկերանում
էր Վիեննան, որ երաժշտական աշխարհի
կեղրոնն էր:

Մի տարուց յետոյ մեծ երաժիշտ
Հայդնը այցելում է Բոննը: Թէի Մաք-
սիմիլիան արքեպիսկոպոսը բացակայ էր,
բայց երաժշտական խումբը դործ է զնում
բոլոր միջոցները, վայելուչ ընդունելու-
թիւն ցոյց տալու և ի պատիւ նրա ճաշ
է տալիս: Այդ օրուան համար պատրաս-
տուած Բեթհովէնի մի նուազը մեծ տպա-
ւորութիւն է թողնում Հայդնի վրայ և
նա խոստանում է ամեն կերպ Լուդովի-
կոսին օգնել:

Այդ անկեղծ և սիրալիր վարմունքի
տպաւորութեան տակ Լուդովիկոսը որո-

շում է իրագործել այն, ինչ որ մինչև
այդ ժամանակ ցնորք էր համարում,
կը կին ուղեղուել Վիեննա:

1792 թուակ. նոյեմբերին ունենա-
լով արքեպիսկոպոսի կապած թոշակը՝
թեթև սրտով, ըստ որում նրա եղայր-
ները արդէն ապահովուած էին՝ մինը
դեղագործ էր, իսկ միւսը երաժշտութեան
ուսուցիչ, նա Բոննից մեկնեց Վիեննա:

II

Բեթհովէնը Վիեննայում: Փոքրիկ ճանապար-
հորդութիւնները:—Առաջին սիմֆոնիան:—Խու-
թիւնը:—Կտակը:—Երկրորդ և երրորդ սիմֆո-
նիանները:—Լէօնօրա—Փիգելիօ:—Բարեկամների
օգնութիւնը: 4-րդ, 5-րդ և 6-րդ (հովուակն,
պաստորալ) սիմֆոնիանները:

Վիեննայում իշխում էր երաժշտու-
թեան ուկեդարը, թէև «երաժշտութեան
թագաւորը» *) արդէն վախճանուած էր,
իսկ այդ աշխարհում տիրում էր ծերունի
Հայդնը, որ ոչ մի մըցակից չունէր,
և Բեթհովէնը շտապում է ներկայանալ
Հայդնին: Երբ Բեթհովէնը առաջին ան-
գամ ներկայացաւ Հայդնին, թէ աշա-
կերտ և թէ ուսուցիչ շատ գոհ մնացին
իրարուց և անմիջապէս քաշուեցին մի
սրճանոց, որտեղ և վերջացաւ առաջին
դասը: Սակայն Բեթհովէնը շուտ յուսա-
հատուեց, որովհետև նրանց երկուսի

*) Մօցաբառ:

հայեացքները խիստ տարբերւում էին միմեանցից. մէկը երաժշտութեան անցեալն էր ներկայացնում, իսկ միւսը— ապագան: Ուստի յայտնի երաժիշտ Գելենիկի խորհրդով, նա սկսում է և դասեր առնել գիտնական երաժիշտ Շէնկի մօտ:

Միաժամանակ և հետզհետէ ընդարձակւում է Բեթհովէնի ծանօթների շրջանը: Այն ժամանակուայ բարձր դասակարգը պաշտում էր երաժշտութիւնը և հոգեկան վայելչութիւն էր գտնում: Արիստոկրատներից շատերը պահում էին երաժշտական խմբեր, որոնց ղեկավարութիւնը երբեմն ստանձնում էին Հայդենը, Մօցարտը, Սալիերին և այլ հըռչակաւոր երաժշտապետները:

Եւ ահա երկու տարուց յետոյ Բեթհովէնին գտնում ենք իշխան Լիխնովսկու տանը: Այդ առաջին նշանաւոր անձն էր, որ ամենասիրալիր կերպով ընդունեց նրան և առաջարկեց իւր պալատում ապրել: Թէ ինքը իշխանը և թէ նրա ամուսինը չափազանց սիրում էին երաժշտութիւնը և յարգում ու պատւում

Բեթհովէնին: Բացի Լիխնովսկուց բազմաթիւ սալօնների դռները բաց էին նրա առջև, ուր նա դասատութիւն էր անում: Այդ միւնոյն միջոցին նա տպում է իւր առաջին երեք տրիօները*), որոնք մինչև 2000 ֆրանք նրան արդիւնք տուին: Այդ տրիօներից վերջինը ամենատարօրինակը ու գեղեցիկը, Հայդենը չհաւանեց, բայց Բեթհովէնը համոզուած լինելով, որ այդ նուազը միւսներից շատ բարձր է, որոշեց լոյս ընծայել:

1791 թ. Բեթհովէնը ճանապարհորդեց Նիւրբերգ, ուր տեսնուեց Բոննի իւր հին բարեկամների հետ: Վերադառնալով Վիեննա, որ հետզհետէ սիրելի էր դառնում նրան, նա տպեց մի սօնատա և երկու վարիացիաներ: Դրրե սիրահար ճանապարհորդութեան, որ նրա կը կոտ բնաւորութեան կարելի է վերագրել, նոյն տարին նա այցելում է և Պրագան, Բոհեմիայի մայրաքաղաքը, ապա Բերլինը, ուր արժամանում է Պրուսիայի Ֆրիդրիխ Վիլհելմ II արքայից

*) Տրիօ—կոչում է եռանուագ դրուածք:

շքեղ ընդունելութեան։ Արքայազն տան
անդամ մեծ իշխան Լուդովիկոս Ֆերդի-
նանդը ընտիր նուագող էր կլաւե-
սինի վրայ և Բեթհովենը նրան լսելուց
յետոյ ի մեծ սարսափ ունկնդիր պալա-
տականներին հետեւեալ խօսքերն ասաց.
«Դուք նուագում էք ոչ իրբու իշխան,
այլ իբրև մի արախսու։»

1800 թ. ապրիլի 2-ին Բեթհովենը
մի մեծ նուագահանդէս է տալիս Վիեն-
նայում և ինքն իւր առաջին կօնցերտն
է նուագում օրկեստրի հետ, իսկ օրկեստ-
րը նուագեց առաջին սիմֆոնիան *):
Այդ առաջին հրապարակական հանդէսի
առթիւ „La gazette de Vienne“ թերթի
մէջ միայն հետեւեալ տողերն էին գրուած՝
«Բեթհովենի այդ նուագները շատ հա-
րուստ են բովանդակութեամբ», քանի
որ այն ժամանակ կանոնաւոր քննադա-
տութիւն չկար։

*) Ջարագրութեան շատ ընդարձակ ձև, որ
յօրինում է մեծ նուագախմբի համար և բաղ-
կացած է 4 մասից՝ Allegro (կենդանի, արագ),
Adagio (մեղմ, հանդարտ), Scherzo (կատակով
լի) և Finale (կերչաբան)։

Յայտնի Փրանսիական կրիտիկոս և
մեծ երաժիշտ Հեկտոր Բերլիոզը այն հա-
մոզմունքի է, թէ առաջին սիմֆոնիան
իրը ոչ թէ Բեթհովենն է գրել, այլ Մո-
ցարտը, միայն աւելի ընդարձակ, իսկ
մտքերի կողմից աւելի աղքատ։

Այս վերջին բառերը վերաբերում
են միայն առաջին սիմֆոնիային, որով-
հետև մնացեալ 8 սիմֆոնիաները լի են
հարուստ երաժշտական մտքերով և քըն-
նադատի կարծիքով միանդամայն ինք-
նուրոյն են։

Քրէյտկոպֆ և Հերտեր շատ յայտնի
առևտրական տունը, որ մի երաժշտա-
կան ամսաթերթ էր հրատարակում, ուր
խիստ քննադատում էին և յարձակում
Բեթհովենի շարադրութիւնների վրայ,
ծանօթանալով մեծ երաժշտի անուան
հետ, որ արդէն փառք և հռչակ էր վա-
յելում, առաջարկում է նրան վաճառել
իւր գրուածքներից մի քանիսը։ Բեթհո-
վենը օգտուելով դէպքից, որով հնարա-
ւորութիւն էր ստանում իւր կարծիքը
յայտնել և այպցիդի քննադատների մա-

սին, իւր նամակում անուանում է նրանց «կայպցիզի աւանակներ» և խորհուրդ է տալիս այդ աստիճանի խիստ չվնել, որովհետև բազմաթիւ նոր թարմ տաղանդներ կարող են յուսահատուիլ, թէս «ինքը ամենեւին ուշադրութիւն չէր դարձնիլ դրանց վրայ»:

Նրա այդ նամակը պարզ հաստատում է, որ մեծ երաժշտի գիրքը արդէն թէ իրեն երաժշտի և թէ կօմպօղիտօրի նախանձնիլ էր: Նրան չեն վիրաւորումքննադատների յարձակումները, իսկ յիշեալ հռչակաւոր ֆիրմայի դիմումը կենդանի ապացոյց է, որ նա արդէն միանգամայն նուիրուել էր իւր սիրած գեղարուեստին: Սակայն նրան մի զարհուրելի դժբաղդութիւն և փտանգ էր սպառնում—այդ էր խութիւնը:

Բեթհովենի կենսագիրներից շատերը ասում են, որ նրա խութիւնը արդէն սկսուել էր 1796 թ., և իբրև դրա պատճառը այն հանգամանքն էր, որ նա սիրում էր ընդմիջանց քամու մէջ նստել: Բայց փաստ է, որ այդ սարսափելի տկարութիւնը արդէն սաստկանում էր

և հետզհետէ անբուժելի դառնում: Նա դիմում է բազմաթիւ բժիշկներին, նոյն իսկ ժողովրդական «հէքիմ-ներին», բայց ապարդիւն. խլութիւնը չէր անցնում, թէև բժշկական միջոցներով հնարաւոր էր լինում երբեմնակի ականջների մէջ եղած աղմուկը նուազեցնել:

Խլութիւնը շատ վատ ազդեցութիւն ունեցաւ Բեթհովենի վրայ, նա կատարելապէս փոխուեց և սկսեց խուսափել հասորակութիւնից, որ մի գուցէ այդ տկարութիւնը իմացուի: Թատրոնում նա ստիպուած էր նստել բոլորովին նուագախմբի մօտ: Երաժիշտը միակ իւր միսիթարութիւնը գտնում էր Պլուտարքոսի «հեղինակութիւնների մէջ», որոնց միշտ կարդում էր: Նրա մօտիկ բարեկամներից մինը խորհուրդ է տալիս նրան վերադառնալ Բոնն ու հանգիստ ապլել, բայց Բեթհովենը մերժում է պատասխանելով «Երբէք չեմ՝ կարող այդ առաջարկութիւնը ընդունել. ինձ համար վերին աստիճանի ծանր կը լինի տեսնել բարեկամներիս եւ նրանց դէմքի վրայ նկատել, որ

Նրանք ինձ խղճում են: Ինձ շատ սիրելի է այն միտքը, որ կը յաջողութիւն փառքով վերադառնալ: Զգում եմ, որ ոյժերիս ամենահասուն ժամանակն է, սակայն, աւանդ... Չեմ ցանկանում հանգստութեան մասին լսել անգամ, քնից զատ մի այլ հանգստութիւն չեմ ճանաչում եւ պատրաստ եմ՝ արիաբար ճակատագրի ծանր հարուածներին ենթարկուելու»:

Դժբաղդ երաժիշտը իւր բնակութիւնը հաստատեց Վիեննայի շրջակացքում Հեյլիցէնցատում, ուր նա կատարեալ անդորրութիւն, էր վայելում բնութեան գոգում: Տնակը, որ առանձնացած դիրք ունի և որտեղից հրաշալի տեսարան էր բացւում, մինչև այժմ էլ կանգուն է մնացած և երաժիշտների ուխտատեղի է: Այստեղ նա, ճգնաւորի նման փակուած, համեստ կեանք էր վարում, տեսակցելով միայն իւր բժշկի և իւր աշակերտ Ռիսի հետ: Վերջինս Բեթհովէնի վաղեմի ընկերոջ որդին էր: Երբոր Բեթհովէնի անունը այնքան հոչակուեց,

Թրանց Ռիսը մի նամակով դիմեց նրան՝ խնդրելով օգնել իւր որդի ֆերդինանդին, որ մեծ ընդունակութիւն էր ցոյց տալիս երաժշտութեան մէջ: Մեծահոգի երաժիշտը թէս միշտ ձանձրանում էր գասերից, բայց ի նշան երախտագիտութեան յանձն առաւ պարապել, թէ երաժշտութեամբ և թէ թէօրիայով և անկեղծ սիրեց ազնիւ երիտասարդին: Այդ առանձնութեան ժամանակ գրեց նաև պատմական նշանաւոր կտակը, որին աւելի շուտ կարելի է «տխուր էլեգիա» անուանել:

Պատմում են, որ մի անգամ, երբ մեծ երաժիշտը և երիտասարդ Ռիսը զբունում էին անտառում, աշակերտը իւր ուսուցչի ուշադրութիւնը զարձրեց թռչնակի երգի դայլայլիկի վրայ, սակայն տարաբաղդ երաժիշտը ի զուր էր աշխատում այդ ձայները լսել, ոչ մի հընչիւն չհասաւ նրա ականջին: Կէս ժամ նա ապշած կանգնած մնաց միենոյն տեղում առանց մի յուսահատական բառ, մի տրտունջ յայտնելու, և համոզուելով իւր կատարեալ խլութեան մէջ, վերա-

դառնալով սինեակը՝ այդ տխուր իրողութեան տպաւրութեան տակ՝ գրեց իւր կտակը.

Այդ պատմական գոկումնտի մէջ նա դիմում է աշխարհին և բացատրում, որ սխալ է նրան մարդատեաց ածական տալը, նա ներողութիւն է խնդրում մարդկանցից փախուստ տալուն համար։ Նա սիրում է հասարակութիւնը, նա սաստիկ տանջւում էր մանաւանդ այն ժամանակ, երբ իւր հետ խօսելիս նա չէր հասկանում և ամաչում էր հարցնել. «Համբերութիւն, համբերութիւն բացականչում է անբաղդ երաժիշտը, բայց մէթէ կարելի է 28 տարեկան հասակում այդպիսի փիլիսոփայական սառնութեամբ նայել կեանքի վրայ...»

Նա յոյս է տածում, որ մարդիկ կարդալով նրա անբաղդութեան մասին այլ ևս նրան չեն դատապարտի։

Բեթհովէնը պատուիրում է եղբայրներին տպագրել կտակը իւր մահսւանից յետոյ բժշկի հաղորդած բոլոր մանրամասնութիւններով։ «Այն ժամանակ գուցէ աշխարհը հաշտուի թշուառ

անբաղդիս հետ, երբ արդէն գերեզմանում պառկած կը լինիմ։ ասում է նա։ Նա իւր կարողութիւնը կտակում է եղբայրներին և խորհուրդ է տալիս նրանց կրթել իրենց որդոց առաքինութեան սկզբունքներով։ «Առաքինութիւնը եւ դէպի արուեստն ունեցած նուիրական սէրս արգելք դարձան ինձ ինքնասպանութիւն գործելու» շարունակում է նա...»

Այդ կտակը գտնուեցաւ Բեթհովէնի ժամկց յետոյ նրա թղթերի մէջ և ձեռքէ ձեռք էր անցնում, իսկ վերջը երգչուհի Ժենի Լինդի մօտ էր, որ այնքան հրաշալի էր երգում Բեթհովէնի բօմանսները։

Այդ միայնակութեան ժամանակ նա գրեց երկրորդ սիմֆոնիան։ Ահա թէ Հեկատոր Բերլիոզը ինչպիսի քարակտերիստիկա է անում այդ գրուածքի բնաւորութիւնը որոշելու համար՝ «Երկրորդ սիմֆոնիան ամեն կերպ վեհ է, լի կենսականութեամբ եւ վսեմ, իսկ ինտրոդուկցիան *») ուղղակի նրա

*) Երաժշտական յառաջարան։

գլուխ զործոցն է»: Ով կարող է հաւատալ, որ երջանկութեան այդ սիրուն և նազելի պատկերը (adagio-մասը), որ համեմուած է միայն մի քանի մելամաղձային ձայներով, այդ ուրախ seherzo և կապակներով լի finale-ը գրուած լինէին Բեթհովէնի կեանքի ամենածանր և դառը բոպէներին ձեյլիգենշտատում:

Բարեբաղդաբար քիչ ժամանակից յետոյ տրտմութեան շրջանը անցնում է, Բեթհովէնը հաշտուում է իւր հիւանդութեան հետ, բայց չէ ընկճուում և ձմեռը մենք նրան դտնում ենք Վիեննայում, ուր նա եռանդուն զբաղուած է նուազահանդիսի պատրաստութեամբ: Այդ նուազահանդէսին նուագեցին նրա օրատօրիան*) «Քրիստոսը Զիթենեաց սարի վրայ» և նոյնպէս նրա երկու սիմֆօնիաները:

Նուազահանդէսը մեծ յաջողութիւն ունեցաւ և նիւթապէս նպաստեց հեղինակին տալով նրան զուտ հասոյթ 1800 ֆլորին:

*) Հոգկոր բովանդակութիւն ունեցող օպերա:

Դրանից յետոյ թէ և նա ձեռնամուխ եղաւ մի օպերա գրելու, որի համար առաջարկութիւն էր ստացել մի թատրոնապետից, սակայն անկատար թողեց և փոխարէնը լոյս ընծայեց աննման գեղեցիկ հերոսական սիմֆօնիան (Eroica): Պէտք է ասաց, որ Բեթհովէնը այդ տարիներում շատ էր այցելում Փրանսական դեսպան Բերնադոտին (վերջը Շվեդացոց թագաւոր) և չափազանց յափշտակուած էր Նապոլէօն Ի-ի անձնաւորութեամբ:

Զարգացած և սնուած այն ազնիւ սկզբունքներով, յանուն որոնց կուիւ էր մղուում մարդկային վեհագոյն իդէալների համար, Բեթհովէնը իւր գաղափարներով հասարակապետական էր և երիտասարդ Ձեներալ նապ. Յօնապարտի անձը իւր վրայ էր կենդրոնացրել մեծ երաժշտի ուշադրութիւնը: Նապօլէօնի գործունէութեան մէջ էր տեսնում նա իւր իդէալական երազների իրականացումն, ուստի և այդ հրաշալի սիմֆօնիան գրելիս նա յիշում էր միայն այդ հերոսին: Գրուածքը վերջացնելով նա զգու-

շութեամբ առաջին երեսին դրօշմեց՝ „Buonaparte“, սակայն հիասթափութիւնը չուտ հասաւ, երբ տեղեկութիւն ստացուեց թէ Նապօլէօնը կայսերական տիտղոս ընդունած է, երաժիշտը զայրացած պատռեց այդ մակագրութիւնը և դրեց վերջնական վերնագիրը «Հերոսական սիմֆօնիա»:

Այնուհետեւ նա նոյն իսկ չէր ցանկանում լսել Նապօլէօնի անունը և երբ վերջինս Ս. Հեղինէի կղզին աքսորուեցաւ թեթևովէնը սառնասիրտ նկատեց՝ ես նախատեսնում էի այդ աղէտը, երբ գրեցի հերոսական սիմֆօնիայի մահանուագը (marche funebre):

Նոյն հերոսական ոգին դրդեց նրան ձեռնամուխ լինել մի այլ ստեղծագործութեան և նա գրեց իւր միակ օպերան «Լէօնօրա», կամ «Ֆիդելիօ»: Երաժիշտը վաղուց էր տրամադրուած և մեծ փափագ ունէր օպերա գրելու և քանի որ լսողութիւնը չէր կորցրել չափազանց սիրում էր օպերա յաճախել: Ահա մի անգամ երբ ներկայացնում էին Պայեր երաժշտի «Լէօնօրա» անունով օպերան, Բեթհովէնը

միանգամայն ոգեորուեց բովանդակութիւնից: Նստած լինելով հեղինակի մօտ, նա չէր ծածկում իւր հիացմունքը և շարունակ գովարանում էր: Բնականաբար Բեթհովէնի գովասանքը շատ հաճելի էր Պայեր հեղինակին, քանի որ նա վերագրում էր իւր երաժշտական հրմտութեան և իւր գրուածքի վսեմութեան, սակայն մեծ եղաւ նրա զայրոյթը, երբ Բեթհովէնը գովասանքներ շռայելով՝ յանկարծ յարեց.

Անպատճառ, անպատճառ պէտք է ձեր օպերայի համար երաժշտութիւն գրեմ, «սառը» ջուր մաղելով երաժշտի ուրախութեան:

Բովանդակութիւնը յանձնուեցաւ յայտնի լիրբետիստ Զօնլէյտներին, որ երկու դորդողութիւնը երեքի դարձրեց:

Ահա այդ օպերայի բովանդակութիւնը: Զարասիրտ Պիդարօն մեղադրում է թագաւորի առջև սպանական ազնուական Ֆլորեստանին, որին և բանտարկում են: Ֆլորեստանի հաւատարիմ արիասիրտ կինը՝ Լէօնօրան տըզայի զգեստ հագած, Ֆիդելիօ անունով,

գնում է և բանտում ծառայում իրին
բանտապետի օգնական: Զարադործ Պի-
զարօն չբաւականանալով Ֆլորեստանի
դժբաղդութեամբ, կամենհւմ է նրան սո-
վամահ անել: Այդ իմանում է բանտա-
պետը և յայտնում Ֆիդելիօյին: Նրանք
երկուսն էլ ստորերկրեայ անցքերով
մտնում են Ֆլորեստանի խուցը և ցան-
կանում են նրան ազատել, երբ անսպա-
սելի ներս է գալիս Պիզարօն, Ֆլո-
րեստանին սպանելու նպատակով: Ֆի-
դելիօն պաշտպանելով իւր ամուսնուն՝
յայտնում է, թէ ինքը լէօնօրան է՝
Ֆլորեստանի կինը: Յանկարծ լսում է
նախարարի փողերի ձայները, որ գալիս
է քննելու քաղաքի դորժերը: Պիզարօի
լարած նենգամիտ որոդայթները բացւում
են, Ֆլորեստանին տպատում, իսկ նրա
փոխարէն Պիզարօին են բանտարկում:
Գլխաւոր դերը (Ֆիդելիօյի) պիտի
կատարէր մատաղատի երգչուհի Միլդե-
րը, որ թէև յետոյ շատ հոչակուեց,
բայց այն ժամանակ դեռ շատ անփորձ
էր և Բեթհովէնը չէր վստահանում նրա
ուժերի վրա:

Օպերայի առաջին ներկայացումը
տեղի ունեցաւ անբարեպատեհ հան-
գամանքներում, 1805 թուակ. նոյեմ-
բեր ամսին: Վլիեննան Նապոլէօնի ձեռ-
քումն էր, արիստոկրատիան փախուստ
էր տուել մայրաքաղաքից և առաջին
ներկայացման հանդիսականները ֆրան-
սական սպաներն էին:

Հասարակութիւնը չատ սառը վերա-
բերուեց օպերային: Սիւժէն անբովան-
դակ էր և ապաշնորհ, թէև հեղինակը
ինքը չէր նկատում, իսկ քննադատները
ոչ միայն խիստ, այլ ուղղակի անարդար
և անողոք էին:

Ծանր էր երաժշտի համար իւր սի-
րասուն զաւակի անկումը, սակայն նա
չյուսահատուեց:

Շուտով վերադարձան մտերիմ բա-
րեկամները, որոնք ձեռնհաս էին այդ
գրուածքի երաժշտական արժանաւորու-
թիւնները գնահատելու: Ժողովուեցան
իշխան Լիխնովսկու մօտ և երկար ընդ-
դիմանալուց յետոյ համոզեցին հեղինա-
կին՝ փոփոխութիւնների և կրծատումնե-
րի ենթարկել օպերան:

1806թ. մարտի 26-ին նորէն ներկայացուեց օպերան, որ արդէն երկու գործողութեամբ էր և ֆլորեստանի դեռը յանձնուած էր նշանաւոր Ռիօկէլ երգչին, որ մեծ յաջողութեամբ կատարեց իւր գերը: Մնացեալ դերակատարները միւնոյն էին, մինը միւսից անշընորհք:

Այդ ներկայացման համար Բեթհովէնը գրում է նոր ուվերտիւրա*), որ այժմ յայտնի է «№ 3 Լէօնօրա» անունով:

Այս անդամ թէս օպերան յաջողութիւն ունեցաւ և քննադատների լեզուն աւելի մեղմ էր, սակայն նորէն անքաւականութիւններ ծագած լինելով թատրոնի կառավարչի և հեղինակի միջև, վերջինս յետ վերցրեց օպերայի պարտիտուրան **): Նատ տարիներ անց Բեթհովէնը կրկին ձեռնամուխ եղաւ այդ օպերայի փոփոխութեան, բայց սա նո-

*) Երաժշտական յառաջարան, որի մէջ ամփոփուած են լինում օպերայի զլինաւոր մեղեդիները:

**) Ամբողջ նուագախմբի ձայների տեսը:

լէն արտմութեան և վշտերի աղբիւր դարձաւ հեղինակի համար:

Այստեղ վերջանում է Բեթհովէնի երթատարդական գործունէութեան շըրջանը. կեանքը նրան կատարելապէս հասունացրել էր, իսկ այդ շրջանի հսկայական անմահ ստեղծագործութիւնները „Eroica“ և «Հօնօրա» նրան դարձին մի անմերձենալի արուեստագէտ գեղարվեստի միջ:

Բայց և այնպէս նրա բարեկամների համար ծանը էր տեսնել մեծ երաժշտի վիրաւորուած ինքնասիրութիւնը. և ահա նրա տիրութիւնը և յուսահատութիւնը փարաւելու համար նրա բարեկամ Բրոնսվիկը իւր հետ տարաւ նրան Հունգարիա՝ իւր կալուածքը:

Այդ ժամանակամիջոցում նրա ոյժերը կարծես թէ սպառուել էին և աշխատելու փափազը նուազել էր: Բայց և այնպէս այդ ճանապարհորդութիւնից մի պատրաստի սոնատ բերեց օր. 57, որ զարմանալի լայն և վաեմ բնաւորութիւն ունի, իսկ Վիեննա վերադառնալուց

ստեղծեց երկք կուտրտես *) ռուսական կեանքից վերցրած, որոնց նուիրեց ռուսաց դեսպան կոմս Ռազումովսկուն: Ժամանակակիցները նրանց վեհութիւնը չհասկանալով, անկարող եղան գնահատել:

1806 թ. նրա ամենամեծ և նշանաւոր շարադրութիւնն էր 4-րդ սիմֆոնիան, որ ամենեին նման չէ հերոսական սիմֆոնիային և աւելի շուտ կարծես յիշեցնում է երկրորդի բնաւորութիւնը: Խօսելով այդ գրուածքի մասին Վիլդէրը ասում է. փնչպէս երեւում է՝ Բեթհովենը հարցնում է ինքն իրեն, թէ արդեօք արժէ՞ աշխարհին յայտնել իր տանջանքները. եւ կարծես թէ իր արտասուքը զսպելու համար ծիծաղում է:

Գերմանացիք այդ սիմֆոնիան շատ չեն հաւանում, իսկ Վիլդէրը թէս հաճամաձայն է, որ դրա մէջ չկան երեակայութեան այնպիսի թռիչքներ, ինչպիսիք կան նրա միւս գրուածքների մէջ, բայց այնուամենայնիւ մեծ շարադրու-

*) 2որս երաժշտական գործիքների համադրադ:

թիւն, է անուանում: Բերլինովի կարծիքով 4-րդ սիմֆոնիայի երկրորդ մասը (adagio-ն) լսելիս մարդ նոյն տպաւորութիւնն է ստանում, ինչ որ Դանտէի «Աստուածային կատակերգութեան», մէջ Ֆրանչիսկա - Դա - Ռիմսինի բանաստեղծական պատմութիւնը կարդալիս:

Այդ սիմֆոնիայից յետոյ նա յօրինեց մի կոնցերտ ջութակի և օրկեստրի համար և ապա իւր նշանաւոր 32 վարիացիաները: Վերջինիս վերաբերմամբ մի զուարձակի անեկդոտ են պատմում:

Մի օր Բեթհովենը այցելում է իրեն լաւ ծանօթ ընտանիքի, որի աւագ դուստրը դաշնամուրի վրայ նուազում էր մի կտոր վարժուելու համար: Մեծ երաժիշտը երկար լուս լսելուց յետոյ, վերջապէս համբերութիւնը կորցրած հարցնում է.

— Խնդրեմ ասացէք, օրիորդ, այդ ինչ էք նուազում:

— Ձեր յօրինած 32 վարիացիաները, սիրելի Մաէստրօ, ծիծաղով պատասխանում է աղջիկը:

Բեթհովէնը իւր ճակատին խփելով
բացականչում է.

—Այս ես յիմարս, միթէ կարելի է
այդպիսի անմիտ բաներ յօրինել:

Այդ ժամանակ Վիեննայի թատրոն-
ների ղեկավարութիւնը նորէն մի խումբ
բարձր դասակարդի անձանց ձեռքն է
անցնում, որոնց մեծ մասը Բեթհովէնի
լաւ բարեկամներն էին: Վերջինս սաս-
ափկ փափագ է յայտնում դրամատիքա-
կան երաժշտութիւններ գրել և պաշտօ-
նական թղթով դիմում է այդ խմբին.
սակայն նրան մինչև անգամ չեն էլ պա-
տասխանում, և ահա իւր վրէժը կարծես
հանելու դիտաւորութեամբ գրում է իւր
ամենագեղեցիկ ուվերտիւրան՝ «Կօրիօ-
լան և 5-րդ սիմֆոնիան: Առաջին գըր-
ուածքը հարկաւ որ նա օպերայի համար
պատրաստելիս է եղել, բայց լաւ լիբրե-
տիստ չգտնուելու պատճառով կիսատ է
թողել:

Գէթ մօտաւորապէս ըմբռնելու հա-
մար 5-րդ սիմֆոնիայի արժանաւորու-
թիւնները, շատանանք Բերլիոզի կարծի-

քով, որ ասում է. «Նա կարծես իւր
հարուստ երեւակայութեանը կատա-
րեալ ազատութիւն է տուել: Ոչ մի
գրուածք այդ աստիճանի չէ ար-
տայայտում Բեթհովէնի անհատա-
կանութիւնը, եւ չէ պատկերացնում
հեղինակի բարձր, վսեմ եւ ազնիւ
զգացումները, որքան այդ սիմֆո-
նիան»:

Սրդէն 1880 թ. այդ գրուածքի էս-
քիզները պատրաստ էին, իսկ 1807 թ.
Բեթհովէնը ամառը տեղափոխուելով
Բադ Քաղաքը և այնտեղ անընդհատ աշ-
խատելով, վերջապէս Հէյլիգէնշտատում
աւարտեց և այնտեղ յօրինեց իւր
առաջին մեսսան (պատարագը):

1808 թ. գարնանը Բեթհովէնը կրկին
բնակութիւն է հաստատում Հէյլիգէն-
շտատում, որ նրան շատ սիրելի էր
դարձել և գրում է իւր երեսի 6-րդ հո-
վուական (պաստօրալ) սիմֆոնիան: Գը-
րուածքի ածականից արդէն նկատելի է,
որ նրա մէջ պիտի պատկերանան գիւղա-
կան կեանքը և անարատ բնութիւնը: Ար-
դէն ամենահին ժամանակներից սկսած աշ-

լսատում էին այնպիսի մի երաժշտութիւն
ստեղծել, որ կարող լինէր մի որոշ գա-
ղափար, իդէա արտայայտել: Բեթհովենը
ինքը մի որեւէց կտոր գրելիս միշտ մի
գաղափար, մի խորհուրդ էր ունենում
ի նկատի և հենց որ վերջացնում էր,
մոռացութեան էր տալիս այդ գաղափա-
րը, կարծես թէ աւելորդ համարելով հա-
շիւ տալ մարդկութեանը իւր զգացմունք-
ների մասին: Բայց նա ունի գրուածք-
ներ, որոնց վերնագրերն արդէն որոշ
գաղափար են տալիս ամբողջ բովան-
դակութեան մասին. և այդ սիմֆոնիան՝
թէ իւր գաղափարներով և թէ
ստեղծագործութեամբ իրեն հաւասարը
չունի:

Բեթհովէնի Փիզիքական և բարոյական կագ-
մուածքը: Ընկերական շրջանը: Բեթհովէնը իրք
արտիստ: Նրա գլանական և երաժշտական
ճաշակը:

III

Միշև հիմա մենք նկարագրեցինք Բեթ-
հովէնի կեանքը, նրա գործերը. այժմս
ծանօթանանք նրա անձնաւորութեան
հետ:

հետև յիշողութեամբ նկարել: Նատ հետաքրքիր է Բեթհովէնի մի փոքրիկ մինիատիւր պատկերը 1802 թ. որ Հորնեման նկարիչի գործն է: Ահա թէ այդ փոքրիկ պատկերի համաձայն ինչպիսի արտաքին է ունեցել մեծ երաժիշտը իւր երիտասարդութեան ամենաչքնաղ օրերում. զլուխը մհծ, առիւծի զլիսի նման, ծաղկատար դէմք, երկար և խիտ մազեր՝ անկանոն թափուած ամեն կողմից, արտաքոյ կարգի լայն ճակատ: Նա խաժակն էր, քիթը լայն և փոքր աւելի կարմրած, բերանը հասսատառն արտայայտութեամբ, ատամները սպիտակ և կանոնաւոր, կզակը քառանկիւնաձեկ, հասակը թէն միջակից էլ պակաս, բայց զօրեղ, առողջ մկանուններով: Մատները կարճ, հաստ: Նըա շարժուածքները բնաւ վայելուչ չինելով աչքի էին ընկնում տարօրինակ արագութեամբ և կինդանութեամբ:

Փողոցումնա միշտ առանձին տպաւորութիւնն էր թողնում անցորդների վրայ, մանաւանդ որ չորերը միշտ անկարգ էին, թէ և մաքուր. նա հազնում էր կապոյտ կամ կանանչ մահուդի

զգեստ. դեղնագոյն պղնձեայ կոճակներով: Այդ մոյգ հագուստի վրայ երևում էին սպիտակ բաճկոնակը, փողպատը և ու ժապաւէնից կախուած հեռադիտակը, որովհետև Բեթհովէնը շատ կարճատեսէր. Գդակը ծածկումէր բաւական ծիծաղելի կերպով՝ ամեն կողմից ճմլուած: Յաճախ փողոցում նա միայնակ խօսումէր ձեռ ու ոտ շարժելով, և մինչդեռ չափանց արագ մանգալուց վերարկուն ծածանում էր օդի մէջ, հնարաւոր էր տեսնել, որ գրպանները միշտ ծանրաբեռնուած են ամեն տեսակ մանր-մուեր առարկաներով նօթայի թղթով, լսելու խողովակով և այլն:

Բեթհովէնի ընաւորութեան մէջ ամենագարմանալի կերպով վսեմը, բարձրը անտանելի գուեհկութեան հետ էր կապուած: Բայց բաւական է մի թեթև ակնարկ ձգել նըա անցեալի վրայ, որ այդ տարօրինակ երեսյթի բնակոն պատճառները գտնել: Ծնուած փոքրիկ գաւառական քաղաքում, մի համեստ գերգաստան մէջ, ուր մայրը պաշտում էր որդուն, իսկ հայրը անտանելի կոպիտ վարմուն-

քով գրգռում էր երեխային, նա զըրկուած էր նոյն իսկ սովորական միմիթարանքներից: Արդէն հօր մշտական հարբած տեսքը կարող էր ամենավատ աղդեցութիւնը գործել զգայուն, կրքոտ մանկան վրայ... և յանկարծ այդպիսի հանգամանքներից յետոյ նա ընկնում է Վիեննայի բարձրագոյն շրջանները, ուր ոչ թէ միայն նրան յարգում են, այլ մինչև անգամ խորին ակնտօնթեամբ են վերաբերում և հակառակ իւր կոպիտ տգեղ դէմքին, չքնաղ, փափկասուն կըրթուած կանայք և օրիորդներ յափշտակւում են նրա անձնաւորութեամբ:

Ինչպէս արդէն գիտենք, նա ուսումից զուրկ էր մնացել, բայց բնութիւնից օժտուած լինելով մտաւոր ընդունակութիւններով նա մուտք ունէր լուսաւոր շրջանները և միայն խոսափում էր արիստոկրատներից և պարատական շըրջաններում երբէք չէր փոխում իւր սովորական ձեւերն և վարմունքը, ըստ որում ամեննեին չէր ցանկանում իւր առատութեան վրայ բռնանալ: Այդպէս մի անգամ Բեթհովէնը սաստիկ վրդովուած

գալիս է իւր աշակերտ, Աւստրիայի թագաժառանգ Ռուդոլֆի մօտ և յայտնում որ ընդհատում է իւր դասերը: Թագաժառանգը ապշած նախ աղաչում է և ապա պահանջում է, որ պատճառները իրեն յայտնէ: Վերջապէս Բեթհովէնը խոստովանում է, թէ անկարող է ենթարկուել արքունիքի ընդունած կարգերին, մինչդեռ արարողապետը նրանից խստիւ պահանջում է կարգերի պահպանումը: Եւ քանի որ երաժշտապետի որոշումը անփոփոխ էր, թագաժառանգին մնաց միայն համաձայնել այդ պահանջին:

Բայց պէտք է նկատել և այն, որ Բեթհովէնը շատ կանուխ արժանանալով չտեսնուած փառքին՝ չափազանց մեծամիտ և գոռոզ էր դարձել, որոյ չնորհիւ նրանից անպակաս էին բազմատեսակ թիւրիմացութիւնները: Այդպէս մի փառաւոր հացկերոյթին, որ տալիս էր մի պառաւ գրսուհի ի պատիւ գերմանական մի մեծ իշխանի, ուր ի թիւս այլ հրաւիրեալների և Բեթհովէնը կար, վերջինս նկատելով որ իւր համար երկրորդ սե-

նեակումն է տեղ յատկացրած, բարձրաձայն դքսուհուն անուանեց ցնդուած պառաւ, որ չգիտէ թէ՝ մեծ տաղանդներն առաւել բարձր են, քան թէ աշխարհիս բոլոր իշխանաւորները, և վշտացած դուրս գնաց պայտից:

Մի այլ անգամ բազմամարդ երեկոյթին նրան խնդրում են նուագել: Մեծ երաժիշտը զիջանելով բուռն աղաչանքներին համաձայնում է: Այդ ժամանակ կայսերական տան երիտասարդ իշխաններից մէկը բարձրաձայն խօսակցում էր իւր շրջապատողների հետ: Բեթհովէնը մի քանի անգամ դէսի նա դառնալով իմէթ նայում է իշխանին, բայց որովհետեւ վերջինս, ամեննեին կարեռութիւն չտալով այդ նայուածքներին, շարունակում էր խօսել, Բեթհովէնը ընդհատելով նուագելոն, վրդութուած բարձրաձայն ասում է: «Ն այդպիսի խողերու համար սովորութիւն չունիմ նուագելու»:

Նա չափազանց դիւրագրգիռ էր և այդպիսի դէպքերում կատարելապէս կորցնում էր իրեն, իսկ խանալուց յետոյ ծայրայեղ կասկածոտ և կրքոտ դար-

ձաւ: Բեթհովէնի եղբայրները օգտուելով նրա կրքոտ բնաւորութիւնից ստէպ՝ գըրգուում էին նրան ամենամտերիմ բարեկամների դէմ: Բայց ուրախ տրամադրուած բովիչներին որքան էլ բարկացնէին, այնուամենայնիւ չէր նեղանում և չափազանց կատակասէր էր դաւնում: Նրա նամակները լի են սրախօսութիւններով և կատակներով:

Նա պաշտում էր բնութիւնը և ժամերով անտառում ծառի տակ պառկած կատարելապէս մոռանում էր թէ իրեն և թէ ամբողջ աշխարհը. իւր ամենավեմ մաքերը նա հաւաքում էր այնպէս, ինչպէս մեղուն իւր հիմքերը բաց օդում թաւշեայ ծաղիկներից:

Նա այն աստիճան անհոգ էր և մոռացկրտ, որ ստէպ իւր բաճկոնը կամ գլխարկը թողնում էր անտառում և վերսագառնում առանց յիշելու իւր կորուտը: Նոյն իսկ մի անգամ բաճկոնի գըրգանումն էր թողել նուագահանդիսից ստացած ամբողջ հասոյթը, որ անդարձ կորել էր զգեստի հետ միատեղ: Ընդհանրապէս մեծ երաժիշտը աչքի

էր ընկնում իւր տարօրինակ վարմունքով, որն արտայայտում էր նրա խօսակցութեան, ձեւրի, նիստ ու կացի մէջ:

Սյդպէս օրինակի համար նա անդադար փոխում էր իւր բնակարանները, ընտրելով միշտ լուսաւոր սենեակներ և գեղեցիկ տեսարան ունեցող: Փոխադրուելով նոր բնակարանը, որը սկզբում չառ էր հաւանում, նա նուիրում էր սենեակների սարք ու կարգին. գնում էր անչափ կահ կարասիք, որպէս զի 1—2 շաբաթից մի այլ տեղ փոխուի:

Վիեննայի Մեօլկերբաստէյ փողոցում մի բնակարան կար, որ Բեթհովէնին շատ հաճելի էր: Նա բազմիցս անգամ վարձել է այդ բնակարանը ու յետոյ տեղափոխուել: Տանտէրերը այնքան էլ մեծ հաճոյքով տուն չէին տալիս նրան:

Երաժիշտը սովորութիւն ունէր զովանալու համար սառը ջուր ածել իւր վրայ, և որովհետև բնակարանը վերին յարկումն էր, իսկ յատակը ոչ այնքան գովելի շինուած, ջուրը ձեղքերից ներքև էր թափւում և մեծամեծ դժգոհութիւններ ծագեցնում:

Բեթհովէնի սիրած այդ բնակարանը չորրորդ յարկումն էր, որտեղից բնութեան հրաշալիքներն էին բայցում աչքի առջեւ: Մի օր երաժշտին միտք է ծագում, որ տեսարանը դէպի Դանուբ գետը աւելի սքանչելի կը լինի—ամփոփ, եթէ երկու պատուհանի մէջտեղի պատը վերցնեն: Մտածելուն անմիջապէս գործողութիւնն է հետևում առանց տանտիրոջ կամքն առնելու և մի քանի ժամ անցած զրեթէ որմնադիրը պատը քանդած պիտի լինէր, երբ տանտէրը վրայ է հասնում և սարսափահար եղած ապշում է: Հարկաւ երաժշտին առաջար-կեցին տունը դատարկել:

Շատ տարիք անց Բեթհովէնը չէր կարողանում ըմբռնել թէ ինչո՞ւ նրան արգելեցին իւր դիտաւորութիւնը իրագործել և պատը քանդել: Պէտք է ասել, որ մեծ երաժիշտը ընդհանրապէս աւելի ժլատ էր քան թէ առատաձեռն, մտնաւանդ վերջին տարիքը, երբ նա եղբօր որդու համար էր ժողովում բոլոր իւր եկամուտները, սակայն բնակարանների նկատմամբ միշտ առատաձեռն մնաց:

Նրա սենեակում կատարեալ քահօս էր
մանաւանդ թղթերի վերաբերեալ: «Մես-
սան աւարտած լինելով՝ նա երկար ժա-
մանակ փնտռում էր նրա տուաջին մա-
սը և վերջապէս շարադրութիւնը խոհա-
նոցում գտնուեց, ուր աղախինը տարել
էր կարագ փաթաթելու համար:

Միտքը զբաղուած ժամանակ ամին
ինչ մոռանում էր: Պատահում էր, որ
պանդոկ գնալով ճաշելու համար, եթէ
ծառան խկոյն չէր բերի պատուիրած
կերակուրը, նա ոգեսրում էր մի որ և է
թեմայով և ճաշացուցակի վրայ իւր մըտ-
քերն էր զրի անցնում իսպառ մոռա-
նալով քաղցը և մտաբերելով իւր այցե-
լութեանքուն նպատակը միայն այն ժամա-
նակ, երբ յաճախորդները արդէն հեռա-
ցած էին լինում և ծառան յայտնում էր,
որ բոլոր կերակուրները սպառուած են:
Նա շատ չափաւոր կեանք էր վարում,
խմում էր միայն մաքուր ջուր և սուրճ.
վերջինը սիրած խմելիքը լինելով, ա-
ռանձին խնամքով էր պատրաստել տա-
լիս իւրաքանչիւր օր մի բաժակ սուրճի
համար 60 հատիկ ընտրելով: Երեկոները

նա անց էր կացնում գարեջուր խմելով,
լրագիւներ կարգալով և նւրովայի քա-
ղաքական հարցերի քննադատութեամբ:
Բայց նրա բնաւորութեան թերութիւն-
ները ինքն ըստ ինքեան նսեմանում են
նրա անսահման բարութեան առջև: Նա
թէև դիւրութեամբ վերջ էր տալիս իւր
բարեկամականյարաբերութիւններին չըն-
չին պատճառերից զբուած, բայց իսկոյն
զղում էր և ներողութիւն խնդրելով
խոստովանում էր իւր յանցանքը:

Այդպէս օրինակի համար երիտասարդ,
բայց արդէն ամբողջ նւրովայում հռչակ
վայելող, դաշնակահար Հումելը երբ
վիեննա եկաւ, Էնթհովէնը նրան սիրա-
լիր ընդունելութիւն ցոյց տուեց, սակայն
շուտով նրանց միջև դժգոհութիւններ
ծագեցին. մեծ երաժշտին սիսալեցրել էին
Հումելի վերաբերմամբ և նա մի կոսիտ
նամակով դիմեց երիտասարդ նուագողին
արգելելով նրան երբ և իցէ իւր տան
շեմքը կոխելու: Սակայն միւս օրը Հու-
մելը նորից նամակ է ստանում Բեթհո-
վէնից, որը ամենամտերմական ձեռվ հը-
րաւիրում է իւր մօտ, ներողութիւն խըն-

դրելով, թէ նա խարուած է և այլն. բնականաբար հասկանալի է, որ Բեթհովէնի վարմունքը ոչ ոքին չէր կարող հաճելի լինել, որով միայն նա թշնամիներ էր վաստակում:

Նրա գառնացած սիրտը հանգստացնում էին կանայք, որոնք աւելի կարողանում էին հասկանալ նրա անմահ ըդգացմունքներից բղխած զրուածքները: Այդ տարօրինակ մարդը, որ այդչափ ազատ էր պահում իրեն արխտողրատ շրջաններում, խորը տպաւորութիւն էր թողնում կանանց վրայ: Նրա մօտ գըտնուած է մի գեղեցկունու մինիատիւր պատկերը, որ ենթադրում են թէ կոմսուհի Թերեզա-դը-Բրունսվիկն է: Պատկերի միւս երեսին զրուած էր. Անզուգական քանքարին, մեծ արտիստին, պատով մարդուն»: Թ. Բ.

Կարեսոր չենք համարում թուել այն կանանց անունները, որոնցով հրապուրում էր Բեթհովէնը իւր կեանքի այդ շրջանում, որովհետև դրանք ըստ մեծ մասին թուցիկ յափշտակութիւններ էին: Բայց յիշատակելու է գեռատի գե-

ղեցիկ Զուլիետտա Գիւխսկարդիին, որին Բեթհովէնը առաջին անգամ տեսաւ Վիեննայում 1801 թուակ. և սաստիկ սիրահարուեց: Բեթհովէնի մահից յետոյ գտնուեցան այն նամակները, որ նա գըրել էր այդ գեղեցկունուն: Դրանք Ան այնպիսի խորը զգացմունքներով և սիրով, որ հասկանալի է, թէ ինչու 20 տարուց յետոյ իսկ, նասառնարիւն չեր կարողանում լսել Զուլիետտայի անունը, որ իրեն դաւաճանելով իշխ. Պալլենբերգի հետ էր ամուսնացել:

Նրա հայեացքները բարոյականութեան մասին որոշ էին, սակայն աւելի հետաքրքիր են նրա կրօնական համոզմունքները: Նա մինչև իւր կեանքի վերջը Աստուածադաւառն մնաց (դեխտ) և Աստուծոյ զաղափարը նրա համար անբաժանելի էր բնութիւնից: Սեղանի վրայ գրուած մի չրջանակի մէջ հետեւալ բառերն էին գրուած.

— Ես այն եմ, ինչ որ կայ:

— Ես այն անմեղն եմ, ինչ որ կայ, ինչ որ եղել է, ինչ որ պիտի

Մինի. ոչ մի մահկանացուի ծեռքը չի
բարձրացրել եմ՝ քողը:

—նա ինքն իրենից է եղել եւ ա-
մեն ինչ իր գոյութեամբ նրան է
պարտական»:

Այդ բառերը առնուած էին եղիպտա-
կան բուրգերի արձանագրութիւններից:

Այժմս անցնենք արտիստ Բեթհովենի
ընաւորութեանը: Արդէն գիտենք, որ նա
մանկութեան հասակում շատ յաջող նուա-
գում էր դաշնամուրի վլայ, սակայն հե-
տրզնետէ նաև անձնատուր եղաւ ստեղ-
ծելու, յօրինելու և նուագածութեամբ
սակաւ էր զբաղւում, թէ և մասնաւոր
շրջաններում երբէք չէր մերժում նուա-
գել, մանաւանդ երբ պատրաստի գրուածք-
ներ էր ունենում:

Բեթհովենի մահից յետոյ ոչ ոք չկա-
րողացաւ նման իմպրովիզացիաներ ^{*)},

*) Երբ մի որոշեալ երաժշտական ձև պահ-
պանելով՝ առանց պատրաստուելու նուագում
են, այդ կոչում է իմպրովիզացիա:

վարիացիաներ, Փանտազիաներ ^{**)} յօրի-
նել, իսկ մըցման մասին հարկաւ որ խօսք
էլ չէր կարող լինել:

Այդպէս Վիեննա էր հկել յայտնի
վիրտուոզ Շտէյբելտը, որ ամեն մըցու-
մից բարձր էր համարում իրեն և չափա-
զանց էֆերաներով լացնում էր ունկըն-
դիր հասարակութիւնը: Մի երաժշտա-
կան երեկոյթին՝ որտեղ էր նաև Շտէյ-
բելտը, իբրև ունկնդիր՝ Բեթհովենը նուա-
գում էր զանամուրի մասը իւր տրիօի
մէջ: Այդ գրուածքը լուրջ աշխատութիւն
էր և հասարակութիւնն այն տպաւորու-
թիւնն ստացաւ, թէ իբր Բեթհովենը
յաղթուած լինէր:

Մի քանի օր անց, Շտէյբելտը պի-
տի նուագէր իւր կուինտեալը ^{***)}՝ բովանդա-
կութեամբ աղքատ, բայց լի աչք լացնող
էֆերաներով: Հասարակութեան վրայ ոչ
մի տպաւորութիւն չժողեց այդ երկը:

*) Երբ նուագում են ազատ առանց մի
որոշեալ երաժշտական ձև պահպանելու—կոչ-
ում է Փանտազիա:

**) Հինդ երաժշտական գործիքների համար
յօրինած մի կտոր:

Այն ժամանակ՝ Բեթհովէնը մօտեցաւ դաշնամուրին, սկսեց մի մատով նուագել կունտետի վերջի մասը այնպիսի հարուստ իմպրովիզացիով, որ բոլորովին ապչեցրեց հասարակութեանը։ Շտէյբելտը իրեն յաղթուած զգալով՝ շտապեց Վիեննայից հեռանալ։

Իրքենուագախմբի ղեկավար՝ Բեթհովէնը անտանելի էր. Նա շատ ծիծաղելի դիրքով կանգնած էր լինում իւր սեղանի առաջ, որովհետև աշխատում էր երաժիշտներին նուագած կտորի բոլոր նըրբութիւններն ու իմաստները հասկացնել, որի համար ամեն տեսակ ծիծաղաշարժ ձևեր անում էր։

Յաճախ սաստիկ բարկանում ու հայնոյում էր երաժիշտներին, որոնք շատ էին զայրանում Բեթհովէնի վրայ, որը, աշխատելով միայն կտորի ողին հասկացնել, միւս բոլոր մանրամասնութիւնները աչքաթող էր անում։

Հիմա տեսնենք ինչպէս էր յօրինում Բեթհովէնը։

Առհասարակ այն կարծիքը կայ, թէ երաժշտական գրուածքները ուղղակի

պատրաստ՝ կոմպոզիտորի գլխից գուրս են գալիս և նրանց հարկաւոր է միայն գրի առնել։ Սակայն ենթադրուածի չափ էլ դիւրին չէ այդ։

Մի գերմանացի երաժիշտ նոթիբում ազգանունով, գտել էր Բեթհովէնի մի տետրակը, որտեղ ահագին քանակութեամբ էսքիզներ էին հաւաքուած։ Երեսում էր, որ Բեթհովէնի զլիսում մի նոր միտք ծագելիս՝ տետրակում նշանակում էր և ազատ ժամերին սկսում էր այդ կտորները փոփոխել, կարգաւորել, մինչև որ բոլորովին կատարելագործուած ձև էր տալիս։ Այդպէս չափազանց շատ ուղղուած տեղեր կան նրա երկրորդ սիմֆօնիայի մէջ։ Բեթհովէնը չէր սիրում սրբագրութիւնների մասին իրեն հարց և փորձ անել և այդպիսի դէմքերում միշտ էլ պատասխանում էր։ Այսպէս աւելի լաւ է, թեթհովէնը շատ էր մտածում իւր վերջացած երկերի համար իսկ։ Օրինակ Ռիալ գնացել էր Լոնդոն Բեթհովէնի օր, 106 սոնատան տպելու համար։ Յանկարծ իւր վարժապետը նամակով խընդում է ադամիօյի սկզբին մի չափ

(տակտ) աւելացնել: Իիսի զարմանքը անսահման էր, երբ որ թեթհովէնի խնդիրը կատարելով տեսաւ, թէ որքան մեծ է ֆէքտ յառաջ բերին այդ երկու աւելացրած ձայները:

Գալով թեթհովէնի գրականական և գեղարուեստական ճաշակին, պէտք է ասել, որ նա միշտ ձգտում էր գէպի մեծը, բարձրը, վսեմը: Իւր կըթութեան պակասը նա լրացրեց ընթերցանութեամբ: Կլոպչտոկի Յեսսիադայովի, երկար սքանչանալուց յետոյ, ծանօթացաւ Գեօթէի «Փառստի» հետ:

«Ֆառստի», հետ միաժամանակ նրան յայտնի էին իւր ժամանակակից միւս գերմանական հեղինակների գրուածքները: Գրականութեան մէջ ամենից աւելի սիրում էր Շէքսպիրին: Նրա փոքրիկ գրադարանում գտան Շէքսպիրի բոլոր գրուածքները՝ բոլորովին գգգուած կազմով, որից երեսում էր, որ շատ էին գործածուած: Բայց հակառակ գրականական իւր բարձր ճաշակին, շատ թոյլ էր լեզուի մէջ: Նրա նամակները վերին

աստիճանի զուարճալի են իլենց տառապանակով:

Թեթհովէնի երաժշտական ճաշակի մասին շատ գժուար է գաղափար կազմել: Նրա նօթերի մէջ խտալական զըրուածքները քիչ տեղ էին բռնո մ, իսկ Մոցարտի Դօն-Ժուանից ունէր մի քանի սոնատներ միայն: Թեթհովէնը Մոցարտի դաշնամուրի համար յօրինածներին կարեորութիւն չէր տալիս: Ամենից շատ նա սիրում էր Հենդել կոմպոզիտորին, որին անուանում էր «Երաժշտների երաժշտացը», և միշտ ասում էր. «Գնացէք Հենդելի մօտ և սովորեցէք, թէ ինչպէս միջակ ուժերով կարելի է մեծ էֆէքտներ գոյացնել: Իւր ժամանակակիցների մէջ ամենից աւելի համակրում էր Կերուբինի երաժշտին:

IV

Թոշակ; — Մալֆատի; — Բեսահնա-Բըենտանօ; — «Ա-
թէնքի աւերակները»; — Բեթհովէնը Տեպիցում; —
Ֆիդիիօ; — Եղբօրորդին; — Բարեկամները; — Գոր-
ծունէութիւնը:

Երբ 1808 թուին Նապոլէոն Ա. մի
քանի գերմանական իշխանութիւններ
միացնելով Վեստֆալիան թագաւորու-
թիւնը հիմնեց և փոքր եղբօրն թագաւոր
նշանակեց, շուտով Բեթհովէնն այնտե-
ղից առաջարկութիւն ստացաւ պալատա-
կան երաժիշտ լինելու և բոլոր նուազա-
հանդէսներին զեկավարելու: Բեթհովէնը
համաձայնեց, որովհետեւ այդպիսով տարե-
կան հաստատ 750 գուկատ թոշակ պիտի
ստանար (մօտ 7500 ռ.): Սակայն Վիեննա-
յի նրա բարեկամներից երեքը՝ թագաժա-
ռանգ Ռուդոլֆը, Լորկովից ու Կինսկի
իշխանները թոշակ նշանակեցին Բեթհով-

էնին տարեկան 4000 ֆլորին այն պայ-
մանով, որ երբէք չհեռանայ Վիեննայից:
1809 թուին, երբ քաղաքը պաշարուած
էր Գրանսիական զօրքերով, Բեթհովէնը
շղիմանալով հրացանների և թնդանօթ-
ների պայթիւններին, որոնք սաստիկ վատ
էին ազդում նրա վրայ, չըջակայքից փա-
խաւ իւր եղբօր մօտ, բուն քաղաք: Միւս
օրը քաղաքն անձնատուր եղաւ և մեծ
երաժիշտը հանգստացաւ սարսափելի
ձայներից:

Այդ տարի նա պատրաստեց իւր
նշանաւոր Հրաժեշտ (Les adieux) սո-
նատան՝ օր. 81, որը բաղկացած է հրա-
ժեշտ (թագաժառանգ Ռուդոլֆի հետ),
«բացակայութիւն» (l'absence) և «վերա-
դարձ» (le retour) մասերից:

Բեթհովէնի նիւթական դրութիւ-
նը շատ վատ էր այդ միջոցին: Իշխան-
ները, գտնուելով Վիեննայից հեռու, բո-
լորովին մոռացել էին Բեթհովէնին. միայն
թագաժառանգն էր, որ ժամանակին վը-
ճարում էր Բեթհովէնին խոստացած թո-
շակը: Պատերազմից յետոյ նրա դրութիւ-
նը թէպէտ և լաւացաւ, այնուամենայնիւ

աշխատելու ցանկութիւն չունէր, ըստ ո-
րում սկսել էր յաճախել Մալֆատի ընտա-
նիքը, որի գեղեցիկ աղջկայ հետ ուզում
էր ամուսնանալ: Այդ սէրը բոլորովին
փոխեց Բեթհովէնին: Նա սկսեց հոգ
տանել իւր արտաքինի վրայ և աշխատում
էր միշտ լաւ հագնուած լինել: Բեթհովէնը
չկարողացաւ իւր փափագը իրականացած
տեսնել, որովհետև օրիորդ Մալֆատին
չէր ընդունել նրա առաջարկութիւնը:

Այդ հանգամանքը այն աստիճան մտա-
տանջութեան մէջ ձգեց Բեթհովէնին, որ
նա չէր կարողանում իւր քամոնտա անու-
նով աշխատութիւնը վերջացնել, որը Գեօ-
թէի համանուն դրամայի համար էր պատ-
րաստում: Այդ աշխատութիւնը վերջացնե-
լուց յետոյ, նա միայն մի քանի երգ յօ-
րինեց, և այլ ևս բոլորովին թուլացած և
ոյժից ընկած էր զգում իրեն:

Բեթհովէնը մի օր նստած իւր կլա-
վիսինի առաջ մի երգ էր յօրինում: Յան-
կարծ զգաց, որ մի ձեռք դիպաւ իւր
ուսին: Բարկացած վեր բարձրացրեց իւր
մեծ զլուխը, որովհետև չէր սիրում, որ
իրեն ընդհատէին յօրինելիս: Մի հրա-

շալի, նորատի օրիորդ կանգնած էր նրա
առաջ և ծիծաղում: Այդ տեսիլը մօտեց-
րեց իւր զլուխը Բեթհովէնի ականջին
ու բարձր արտասանեց. «Ես Բետինա
Բրենտանօն եմ» *): Բեթհովէնը երգեց
այդ հիանալի էտի համար իւր նոր յօ-
րինած երգերը, որից յետոյ օրիորդը կարո-
ղացաւ յամառ երաժշտին իւր որջից հա-
նել ու տանել իւր եղբօր մօտ, որ Բեթ-
հովէնի բարեկամներից մէկի ազգականն
էր: Բետինան կարողացաւ իւր ուրախ
ընաւորութեամբ հանգստացնել, մինչև
անգամ փարատել Բեթհովէնի տիրու-
թիւնը: Շուտով օրիորդը ամուսնացաւ
յայտնի հնագէտ դ'Արնիմի հետ: Թէն
այդ բանը միքիչ տիսրեցրեց Բեթհովէ-
նին, բայց այնուամենայնիւ օրիորդ Բը-
րենտանօն կարողացաւ ազատել մեծ ե-
րաժշտին ծանր և ճնշող թախիծից: Ոգե-
ւորութիւնը նորից պատեց նրան, նա
մուացաւ իւր անբաղդ սէրը և նորից
նուիրեց իրեն երաժշտութեան:

*): Այդ օրիորդը յայտնի է իւր նամակազրու-
թեամբ զերմանական մեծ հեղինակ Գեօթէի
հետ:

1811 թուին, թուղապեշտում՝ Հունգարիայի մայրաքաղաքում՝ մեծ հանդէսներ պիտի կատարուէին Աւստրիայի կայսեր տօնի առթիւ: Բեթհովէնին առաջարկեցին մի երկ յօրինել, որքան կարելի է այլարանական բովանդակութեամբ «Աթէնքի աւերակները» անունով: Այդ աշխատութիւնը շատ նշանաւոր էր, չնայելով որ բովանդակութիւնը անձունի էր գրուած: Խ՛չքան մեծ պիտի լինէր Բեթհովէնի տաղանդը, որ կարող եղաւ այդպիսի անպատճառաստ նիւթից, այնպիսի գեցեցիկ երաժշտութիւն ստեղծել: Դըժբաղդաբար Բեթհովէնը հիւանդութեան պատճառով չկարողացաւ անձամբ տեսնել ժողովրդի հիացմունքը իւր գրուածքի վերաբերմամբ: Բայց պէտք է տաել, որ Բեթհովէնը գրամատիքական գրուածքներ քիչ ունի:

1811 թուին մեծ երաժիշտը բժիշների խորհրդով գնաց Տեպլից (Քոհեմիա) առողջութիւնը վերականգնելու համար, թէև իւր ցանկութիւնն էր այդ նպատակով դէպի Նէապոլ ճանապարհորդել: Տեպլիցում նա գտաւ Վիեննայի ծանօթնե-

րից շատերին, նոյնպէս և կայսերական տան իշխաններից միքանիսին: Այդտեղ առաջին անգամ հանդիպեց Գեօթէին, և Բեթհովէնը, որ սքանչացած էր մեծ բանաստեղծի հեղինակութիւններով, բոլորովին հիասթափուեց նրա անձնաւութիւնից: Մի անգամ նրանք զբունում էին միասին, անցորդները յարգանքով բարեւում էին Բեթհովէնին, մինչդեռ Գեօթէն, այդ բարեները իրեն վերագրելով, շարունակ ստիպուած էր զիխարկը հանել: Ելչսոմբերերով Բեթհովէնը ասաց.

— Նեղութիւն մի կրէք այդքան, ըստ որում այդ բարեները ձեզ չեն վերաբերում:

Մի այլ անգամ զբօսնելիս նրանք պատահեցին կայսերական տան իշխանագուններին: Գեօթէն իսկոյն ճանապարհուց շեղուեց և կանգնեց՝ խոր ակնածութեամբ սպասելով այդ անձանց անցնելուն. իսկ Բեթհովէնը հանդիսաւ շարունակեց իւր ճանապարհը, և երբ որ նրանք հասան մեծ երաժշտին, նախ իրենք բարեկամաբար ողջունեցին նրան: Հետաքրքիր են Բեթհովէնի խօսքերն այդ առ-

թիւ.—«Թագաւորների կամքիցն է կախուած ամենաբարձր պաշտօնները տալ մէկին, կամ չբանշաններով զարդարել միւսին, բայց նրանցից չէ կախուած մի նեթհովէն կամ Գեօթէ ստեղծել, այդ պատճառով նրանք պէտք է մեզ յարգեն»։

Հասկանալի է, որ Բեթհովէնի այդ դասը չէր կարող հաճելի լինել Գեօթէին, և նրանք շատ սառը բաժանուեցին միմեանցից։

Տէպիցում Բեթհովէնը ծանօթացաւ Ամելիա Զէբալդ անունով տաղանդաւոր երգչուհու հետ, որը, թէ և ոչ գեռատի, սակայն իւր բարձր խելքով, գեղեցիկ ձայնով և արհեստի կատարելութեամբ տիրեց մեծ երաժշտի սրտին։ Բայց թէ ինչո՞ւ այլքան մտերմութիւնից յետոյ, որ Ամելիան ցոյց տուաւ, մանաւանդ Բեթհովէնի՝ Տէպիցում կրած ծանը հիւանդութեան ժամանակ, չյաջողուեց մեծ երաժշտին ամուսնանալ այդ պատուական օրիորդի հետ,—մնացել է բոլորովին անյայտ։ Միքանի տարուցյետոյ, օրիորդ Զէբալդն ամուսնացաւ մի ուրիշի հետ և միայն այդ կնոջ մահից յետոյ գտան նրա

մօտ Բեթհովէնի մազերից մի փունջ, որի վրայ Ամելիայի ձեռքով նշանակուած էր մեծ երաժշտի անունը։

1812 թ. նա զրեց իւր եօթներորդ սիմֆօնիան, որի երրորդ մասը՝ Allegretto (ուրախ, բնական տրագ) ամեն մի նուագահանդիսում զրաւում է ամբողջ հասարակութիւնը։ Նոյնպէս այդ ժամանակին է պատկանում Վիտազիայի ճակատամարտը, անուանուած նրա մեծ երկը։

1813 թ. մի մեծ նուագահանդէս սարքեց Բեթհովէնը, որտեղ նուագեցին եօթներորդ սիմֆօնիան և Վիտազիայի ճակատամարտը՝ նուագախմբի համար փոխադրուած։ Հասարակութիւնը համակրեց մանաւանդ այդ վերջի կտորը։

Այդ ժամանակ Բեթհովէնի նիւթական դրութիւնը նորից վատացաւ, մինչդեռ զանազան շահախնդիր մարդիկ նրա գըրուածները, շատ անգամ վիովիսած ու այլանդակած, ծախում էին և արդիւնայինդակած, ծախում էին և արդիւնայինդակած, յատկացնում։ Նա ստիպւած էր վնում երբեմն օրերով տանը նստել, որովհետեւ կօշիկ չունէր, և իւր ասելով, «կօշիկները հիւանդ էին»։ Բայց ինչպիսի

հալարտութեամբ էր ասում նա երեք տա-
րուց յետոյ, թէ ինքը «եօթը զոյդ կօշիկ
ունի»:

Կարճ ժամանակի ընթացքում Բեթ-
հովիչնի տուած երկու նուագահանդէսնե-
րում ունեցած յաջողութիւնը նրան կըր-
կին յիշեցրեց «Ֆիդելիօն», և թատրոնի
ղեկավարները դիմեցին Բեթհովիչնին,
խնդրելով, որ թոյլ տայ այդ օպերան
իրենց օգտին ներկայացնեն: Մեծ երա-
ժիշտը ուրախութեամբ համաձայնեց,
մայն այն պայմանով, որ սպասեն մինչև
իւր անելիք միքանի փոփոխութիւն-
ները, և նա բոլորովին փոփոխելով առա-
ջի գործողութիւնը, երկրորդը թողեց
համարեա նոյնը:

Բեթհովիչը վաղուց մտածում էր բա-
րեգործական նպատակով մի նուագա-
հանդէս տալ. վերջապէս յաջողուեցաւ
նրան: Այդտեղ զգալի եղաւ, թէ ինչ
աստիճանի փոխուած էր մեծ երաժշտի
նուագելու վարժութիւնը, և այդ իւր
ականջների ծանրանալուն պատճառով:
Շատ անգամ չարուած գործիքի վրայ
էր նուագում, առանց զգալու նրա ան-

ներդաշնակութիւնը, և կամ այն աստի-
ճան ուժգին էր խփում, որ լարերը
կտրատւում էին:

Վերջապէս 1814 թ., մայիսի 23-ին
առաջի անգամ կայացաւ «Ֆիդելիօնի», ներ-
կայացումը: Հասարակութեան ոգևորու-
թեանը չափ չկար. Բեթհովիչնին անվերջ
դուրս էին կանչում, և այն օրից մինչեւ
հիմայ «Ֆիդելիօն», շարունակ ներկայաց-
նում են Վիեննայի թատրոններում:

Այդ յաջողութիւնից յետոյ, Արտարիա
հրատարակիչը համաձայնեց տպել օպե-
րան, Բեթհովիչնը խնդրեց, իրեն թոյլ տալ
իւր օպերայի ամեն մի կտորը նորից վե-
րաքննել: Երբ վերջի տպուած թերթը բե-
րեց Բեթհովիչնին Մոշոլես երաժիշտը, նա
տանը չէր. այն ժամանակ՝ Մոշոլեսը գը-
րեց վերջին երեսի վրայ. Աստուծու օգ-
նութեամբ վերջացաւ այս աշխատանքը:
Միւս օրն այցելով Բեթհովիչնին, նա
տեսաւ իւր խօսքերի տակ հետեւալը
գրուած մեծ երաժշտի ձեռքով. Անհատ,
ինքդ օգնիր քեզ:

«Ֆիդելիօն», հրատարակելուց յետոյ,
Բեթհովիչնը դարձեալ ունեցաւ միքանի

աշխատութիւններ, որպիսիք՝ են «Փառքի օրը», «Պոլոնէզ», և այլն։ Վերջինս նուիրեց ուստաց կայսրուհուն, որը դրա փոխարէն Բեթհովէնին ուղարկեց 150 դուկաթ (1500 ռուբ.)։

Միւս կողմից թէև թագաժառանգը իւր մասը վճարում էր կանոնաւոր, բայց իշխ։ Լորկովիցը իւր կարողութիւնից ընկաւ և չնայելով որ իշխանի գործերի ղեկավարը առաջարկեց Բեթհովէնին վճարել ամբողջ պարտքը, բայց երաժիշտը վեհանձնաբար չուզեց ընդունել այդ գումարը։ Խակ իշխ։ Կինսկին պատերազմի ժամանակ վախճանուել էր, և Բեթհովէնը ստիպուած էր նրա ժառանգների գէմ դատ բանալ։ Այդպիսով, 1815 թ., նրա տարեկան եկամուտը հասնում էր 3400 ֆլորինի։

Միենոյն տարին Շարլ եղբայրը վախճանուելով, Բեթհովէնին կարգեց իւր ութը տարեկան որդու վրայ խնամակալ։ Բայց Շարլի կլինն այնքան էլ դիւրութեամբ չէր համաձայնում որդուց բաժանուել, և Բեթհովէնը ստիպուեցաւ հինգ տարի դատ վարել, մինչև որ յաջողուեց երեխային բոլորովին իւր խնամքի տակ

առնել։ Հինգ տարուայ մէջ մանուկը բոլորովին փչացել էր, և խեղճ երաժիշտը երբէք չէր կարող երևակայել, թէ ինչպիսի օձ էր տաքացնում իւր կուրծքի վրայ։ Եղբօրորդուն իւր մօտ բերելով, անմիջապէս աշխատեց փոխել իւր անկանոն կեանքը, որով տնային ամեն տեսակ հոգսեր ծանրացան իւր վրայ, մինչև իսկ շատ անդամ ստիպուած էր լինում տան խաղաղութիւնը պահպանելու համար։ Իւր թանկազին ժամերը զոհել խոհարարունու և աղախնումիջն ծագած կուիւները հանդարտացնելու և իւրաքանչիւրին իւր պարտքը հասկացնել տալու վրայ։

Առհասարակ այդ ժամանակ Բեթհովէնի կեանքը շատ տխուր էր Վիեննայում, ըստ որում իւր բարեկամների միմասը վախճանուել, միւսներն ևս հեռացել էին քաղաքից։ Խակ նոր բարեկամներից աւելի մտերմութիւն վայելողը Լինզէր երիտասարդն էր, որ չափազանց սիրում էր մեծ երաժշտին և մահից յետոյ գրեց նրա կենսագրութիւնը։ Մասնաւոր համակրութիւն ունէր նմանապէս

դէպի տիկին Շարէյխէրը, որ Բեթհովէնին օգնում էր առանձին գործերի մէջ, և դէպի բարոնուհի Երտմանը: Երբ վերջինիս միամօր զաւակը վախճանուեց, Բեթհովէնը՝ իմանալով այդ՝ զնաց նրա մօտ և իւր Կարեկցութիւնը այսպէս արտայայտեց. մօտեցաւ դաշնամուրին ու մի չատ տիսուր կտոր սկսեց Երկար նուագել: Վերջապէս վեր կացաւ, աչքերը արտասուրով լի մօտեցաւ դժբաղդ մօրը, պինդ սեղմեց նրա ձեռքը և, առանց մի խօսք արտասանելու, հեռացաւ: Եղրօր մահուամբ Բեթհովէնի աշխատելու եռանդը նուագեց, և երք տարուայ ընթացքում գրած է միայն միքանի մանր բաներ, որոնց մէջ նշանաւոր է «Հեռու գտնուող սիրելին» հրաշալի պօէման:

1816 թ. նա իւր եղբօրորդուն որոշեց մի լաւ գիշերօթիկ դպրոց տալ և Երկար որոնելուց յետոյ, փոքրիկ Շարլին տեղաւորեց իտալացի մանկավարժ Դելիօյի մօտ, ուր բաւական յաճախ գըտնուելով, մտերմական յարաբերութիւն հաստատեց նրա մեծ աղջկայ՝ ֆաննիի

հետ, որ չափագանց յարգում և սիրում էր մեծ երաժշտին:

Երբ որ Բեթհովէնը լաւ տրամադրութեան մէջ էր լինում, ասում է Ֆաննին իւր յիշողութիւնների մէջ, ամեն բան թոյլ էր տալիս իւր հետ անել. Եղբօրորդուն գիրկն էր առնում, հետը խաղում, վազվզում, երեխայի նման կատակներ անում, իսկ վատ տրամադրութեան ժամանակ անշարժ նստած էր մնում տեղում, առանց մի բառ իսկ արտասանելու: Աւելորդ էր փոքրել հետը խօսել, նա պատասխան չէր տալիս:

Եթէ Բեթհովէնը քիչ էր աշխատում, դրանից չպէտք է եղբակացնել, թէ նա բաւականի պատուէրներ չէր ստանում: Ընդհակառակն՝ սկսած Աւստրիայի և Պրուսիայի թագաւորնելից՝ նա շարունակ պատուէրներ էր ստանում զանազան բովանդակութեամբ օրատօրիաներ, սիմֆոնիաներ և այլն գրելու, բայց յամառութեամբ մերժում էր բոլոր առաջարկութիւնները: Եւ զարմանալի է թէ ինչ պէս այդ ժամանակ Բեթհովէնը զգւում էր իւր բոլոր գրուածքներից, և կարծես ըդ-

գալով, որ մօտենում էր իւր գագաթ.
նակէտին, ուզում էր հանդստութեամբ
ու խոր մտածմունքով պատրաստուել
վերջի մեծ ստեղծագործութեան համար:

Մի օր նա շատ ուրախ տրամադրու-
թեան մէջ եկաւ Դել-Ռիօյի մօտ և Փաննի-
յին մի փունջ ծաղիկ ընծայեց:

—Ես արդէն մօտեցել եմ վախճանիս,
ասաց նա. միակ քանը, որ նեղացնում
է ինձ, այն է, որ շատ քիչ եմ կատա-
րել արուեստիս նկատմամբ:

—Այդ կողմից կարող էք բոլորովին
հանդիստ սրտով մեռնել, պատասխանեց
Փաննին,—դուք արդէն անմահացած էք
ձեր գրուածքների շնորհիւ:

—Ոչ, ոչ, այժմս բոլորովին ուրիշ
մտքեր են պաշարում ինձ,—ասաց Բեթ-
հովէնը:

Իսկ այդ մտքերն էին 9-րդ սիմֆո-
նիան:

1817 թիւը նա նուիրեց այդ վսեմ եր-
կի ստեղծագործութեան:

V

Հանդիսաւոր մեսսան:—9-րդ սիմֆոնիան:—Վեր-
ջի անբաղդութիւնները:—Մահն և Թաղումը:

9-րդ սիմֆոնիան գրելուց առաջ, Բեթ-
հովէնը մի մեծ աշխատութիւն էր սկսել,
այն է՝ «Հանդիսաւոր մեսսան»:

Իսկապէս մեծ երաժիշտը միշտ հա-
կումն է ունեցել եկեղեցական երաժեշ-
տութիւն գրելու, բայց հացի խնդիրը
նրան ստիպում էր այլ ուղղութեամբ
գործել:

Ահա, թէ ինչ եղածկացութեան է
գալիս Բեթհովէնի կենսագիր Մարքսը:
Նա ասում է. «Բեթհովէնն մի այնպիսի
խոր երաժշտական կրթութիւն չունէր,
ինչպէս որ Բախը և Հենդելը*). Նա չու-

*.) Բողոքական եկեղեցական երաժշտութեան
ամենամեծ ներկայացուցիչները:

նէր նոյնպէս այն անալատ հաւատը, որ
կարծես բղխում է այդ երաժիշտների
գրուածքների միջից, որովհետեւ չնայելով
իւր դիեստ լինելուն, թեթհովէնը չէր
սիրում կաթովիքական եկեղեցին, թէն
աւազանով պատկանում էր նրան։

«Հանդիսաւոր Մեսսան» գրելում
թեթհովէնին նպաստեց իւր աշակերտի,
թագաժառանդ Ռուդոլֆի արքեպիսկո-
պոս ձեռնադրուելը։ Երաժիշտը շատ էր
ցանկանում ձեռնադրութեան օրը պատ-
րաստ ունենալ իւր մեսասան նուազելու
համար։ Բայց այդ չյաջողուեց, որովհե-
տեւ շատ հանդամանքներ բոլորովին հե-
ռացնում էին նրան երաժշտութիւնից,
մասնաւորապէս իւր հարսի հետ ունե-
ցած անքաւականութիւնները Նարի պատ-
ճառաւ և վերջինիս անհանգիստ կեսն-
քը, որի դէմ շարունակ բողոքում էր
ուսումնարանի վարչութիւնը։

«Մեսսան», ընդարձակ ծաւալ ստանա-
լով, տեսց բաւական երկար և նրան
կատարեալ կրօնական բնաւորութիւն
տալու համար՝ անհրաժեշտ էր փակուել
վանքերի մէջ և նիւթ պատրաստել։

Բայց թէ ինչպիսի դժուարութեամբ
էր յօրինում այդ գրուածքը, անկարելի
է երեակայել։ Տան տէրը խնդրեց նրան
բնակարանից դուրս գալ, որովհետեւ եր-
բեմն ամբովզ գիշերներ անց էր կաց-
նում չափերը (տակտերը) կազմելու
վրայ և ոտքով այնպէս խփում էր յա-
տակին, որ հարեանները չէին կարողա-
նում քննել։ Ծինդէլը պատմում է, որ
մի անգամ մի ուրիշ երաժշտի հետ ե-
կան թեթհովէնին այցելութեան, սակայն,
մօտենալով նրա գրանը, այնպիսի աղմուկ
լսեցին, որ չհամարձակուեցան ներս մըտ-
նել։ Միքանի բողեից յետոյ, նա ինքը
դուռը բացեց և նրան գտան այնքան
փոխուած ու այլայլուած, որ հազիւ կա-
րողացան ճանաչել։ Քրտնքի խոշոր կա-
թիւները գլորում էին նրա երեսից, նա
կարծես պատերազմել էր կատաղի թըշ-
նամիների դէմ։

Այդ մեսսան թեթհովէնը նուիրեց
Ռուդոլֆին և ուզում էր հրատարակել
քածանորդագրութեամբ՝ ամեն մի օրի-
նակը 50 դուկատ։ Հրաւէր ուղարկուց
շատ թագաւորների, մեծ երաժշտների

և այլն, սակայն ամբողջ Եւրոպայում
միայն 7 բաժանորդ գտնուեցաւ, այն
էլ բոլորը թագաւորական տներից:

Գերմանացի երիտասարդ նշանաւոր
երաժիշտ Վեբէրը և իտալացի մաէստրօ
Ռոսինին, որոնց օպերաները անդադար
ներկայացնում էին բոլոր թատրոններում,
մեծ ընդունելութիւն էին գտել այդ ժա-
մանակ: Բեթհովէնի ինքնասիրութիւնը
վիրաւորում էր սաստիկ, երբ տեսնում
էր, որ օտարներին մինչև երկինք են
բարձրացնում, իսկ իրեն արդէն մոռա-
ցել են: Սակայն «Աթէնքի աւերակներ»-ի
ներկայացման յաջողութիւնը վերջ տրւաւ
այդ վիրաւորանքներին և հասարակու-
թիւնը ոգեսրուած՝ մեծ ցոյցեր արեց
նրան: Դեռաստի երգչուհի Վիլհելմինա
Շրեօդերը, որի հետ նոր էր ծանօթա-
ցել Բեթհովէնը, խնդրեց իւր նպաստին
ներկայացնել «Ֆիդիլիոն»: Շուտով փոր-
ձերը սկսուելով, նուագախմբի ղեկավար
ընտրուեց ինքը՝ Բեթհովէնը: Ահա մի ա-
կանատեսի խօսքերը առաջին փորձի նը-
կատմամբ: Նրա ղեկավարութեան տակ
երաժշտները նուագեցին ուղիւրտիւ-

րան: Երգիչները սկսեցին իրենց երգե-
րը, բոլորը խառնուեց, ոչ կարգ կար,
ոչ կանոն, անկարելի լինելով շարունա-
կել, երաժիշտները լուցին: Դժբաղդ ղե-
կավարը զգաց այդ, բայց չէր հասկանում
պատճառը: Հանդիսականներից ոչ ոք չէր
համարձակուում նրան մօտենալ և բացա-
տրել պատճառը: Վերջապէս նա դիմեց
Շինդլէրին, որը մի թղթի կտորի վրայ
գրեց, թէ տանը կը բացատրէ մանրա-
մանութիւնները: Այդքանը բաւական էր
Բեթհովէնին: Նա վեր թռաւ իւր աթո-
ռից և փախաւ տռն: Աննկարագրելի էր
անբաղդ երաժշտի յուսահատութիւնը այդ
առթիւ:

Օրիորդը խաղում էր աննման: Ներ-
կայացումից յետոյ, Բեթհովէնը գնաց
նրա մօտ և իւր չնորհակալութիւնը յայտ-
նեց: Երևելի երգչուհին ասում է իւր յի-
շողութիւնների մէջ. «Ոչ մի ցոյց կեան-
քումս այնքան ուրախութիւն չէր պատ-
ճառել ինձ, որքան Բեթհովէնի ասած մի
քանի չնորհակալական խօսքերը»:

Այդ ժամանակները հարիւրաւոր ճա-
նապարհորդներ Վիեննա այցելելիս, ցան-

կանում էին տեսնել Բեթհովենին: Դրանց հետաքրքրութիւնը շատ էր զայրացնում երաժտին, և նա ստիպուած էր ոչ ոքի շնորհունել:

Նա յօրինում էր 9-րդ սիմֆոնիան, իսկ 10-րդի ուրուագիծը արդէն պատրաստ ունէր յիշողութեան մէջ: Այդ պատճառով չէր կարող համաձայնել իսկոյն Գեօթէի «Փառաստ» դրամայի համար երաժշտութիւն զրել: Ալդեօք չը պէտք է զարմանալ այդպիսի մի մեծ հանձարի վրայ, որ երևակայութեան մէջ ահագին երկեր էր ստեղծում և շատ երկար ժամանակ, առանց զրի առնելու այդ յօրինուածները մնում էին նրա յիշողութեան մէջ և չէին մոռացւում:

Պէտք է ասած, որ Բեթհովենի արդէն 1808 թ. յօրինած գրուածքից — «Փանտազիա», դաշնամուրի, նուագալսմբի և երգեցիկ խմբերի համար երևում է, որ նա ուզում էր երաժշտութիւնը կապել երգեցողութեան հետ սիմֆոնիայի մէջ, և իւր այդ միտքը կատարելապէս երագործեց 9-րդ սիմֆոնիայի մէջ:

1823 թ. նա որոշեց բոլոր գործերից

ազատ լինել և միայն այդ սիմֆոնիայով զբաղուել՝ մինչև անգամ արգելեց իւր բարեկամներին յաճախել իւր մօտ և ամբողջ օրեր անց էր կացնում դաշտերում ու առաջուայ պէս կորցնում իւր բաճկոնը, գլխարկը, և այլն: Շուտով նա գնաց Հետցենդորֆ գիւղը իւր ծանօթ մի բարոնի մօտ, ուր յսս ունէր թէ, միայնութեան մէջ կը կարողանար շարունակել սկսած աշխատութիւնը, բայց բանը այդպէս չեղաւ: Բարոնը իւր պարտականութիւնն էր համարում միշտ Բեթհովենին զբաղեցնել, և ուր որ երաժիշտը գնում էր զբօննելու, սիրալիր տանտէրը հետևում էր նրան: Բեթհովենը երկար չդիմացաւ այդտեղ և փախաւ թաղ, ուր միայնութեան մէջ աւարտեց իւր միհ աշխատութիւնը:

9-րդ սիմֆոնիայի առաջին մասը վերին աստիճանի վեհ և միենոյն ժամանակ տխուր բնաւորութիւն ունի: Երկրորդ մասի համար նա երկու մելոդիա ունէր պատրաստած, որոնցից մինը, առում են, նրա մտքի մէջ ծնունդ առաւ այն բոլէին, երբ ձնձղուկները ծլվլում էին

Նրա պատուհանի տակ: 1823 թ. հոկտեմբերին բոլոր երեք մասերն էլ պատրաստ էին նրա երեակայութեան մէջ և հարկաւոր էր նոցա միայն գրի առնել: Այդ սիմֆօնիայի մէջ երգեցողութեան խօսքերը թեթհովէնը առաւ Շիլէրի «Ուրախութիւն», օդայից: Այդ ընտրութիւնը կարող ենք նրանով բացատրել, որ Շիլէրի այդ գրուածքի իսկական վերնագիրն եղել է «Ազատութեան օդա», բայց այն ժամանակների քաղաքական հանգամանքները ստիպած էին մեծ հեղինակին վերնագիրը փոխել: Հարկաւ այդ գաղտնիքը յայտնի էր թեթհովէնին, մանաւանդ որ ինքն էլ հասարակալետական էր, այդ պատճառով նա ընտրեց այդ օդան: Նրա բարեկամ հեղինակները շատ յուսահատուած էին այդ ծանր ժամանակից, որովհետև աղատ խօսքն արգելուած էր: Թեթհովէնը նրանց միշտ պատասխանում էր: «Ոչ ոք չի կարող նօթաների պատութիւնն արգելել: Այդ պատճառով հասկանալի է, թէ ինչու բոլոր երգեցողութեան կտորները 9-րդ սիմֆօնիայի մէջ պատերազմական բնաւորութիւն ունին,

իսկ խորալի մելոդիան լի է կրօնական զգացմունքով, ուր կարծես աղատութիւնը փառաբանում է երաժշտութեան մէջ: Խչալէս արդէն ասացինք, 1820 թուականներին վիեննայեցիք յափշտակուած էին օտարազգի երաժիշտներով, և թեթհովէնը այնքան վիրաւորուած էր իրեն զգում, որ ուզեց 9-րդ սիմֆօնիան առաջի անգամ թերլինում տալ: Երբ այդ իմացան բարեկամները, իսկոյն մի սիրուն ուզերձ պատրաստեցին և ուղարկեցին նրան: Նա չափազանց զգացուեց և անմիջապէս վարձեց Վիեննայի թատրոններից մէկը, որի ղեկավարը պահանջեց մի երեկոյթի համար 1000 Գլորին: Մայիսի 7-ին, 1824 թուին, նշանակեցին նուազահանգէսը, որտեղ պիտի նուազէին օր. 124 ուվերտիւրան, երեւք մեծ հիմներ (փառաբանական երգեր) և 9-րդ սիմֆօնիան երգեցիկ խմբով: Երբ կրկնութիւնները սկսուեցին, երգիչները սաստիկ գանգատում էին իրենց գժուար կտորներից և ի զուր աղաջում թեթհովէնին փոխել միքանի տեղերը, նա չհամաձայնեց ոչ մի փոփոխութիւն անել: Այդ նուազա-

հանդիսին պիտի մասնակցէին շատ նշանաւոր երգչուհիներ, որոնք են օր. օր. Զոնտադ, Ունգեր և այլն: Մեծ յաջողութիւն ունեցաւ այդ նուազահանդէսը: Բեթհովէնը նստած էր զեկավարի մօտ և ի հարկէ չէր կարող լսել, թէ ինչպէս ամբողջ թատրոնը դղրդում էր ծափահարութիւններից: Այն ժամանակ օրիորդ Ունգերը բռնեց նրա ուսերից և դարձրեց դէպի ոգեորուած հասարակութիւնը: Բեթհովէնը ողջունեց: Այդ միջոցին ծափահարութիւններն այնպէս սաստկացան, որ շատերը վախենում էին, թէ մի գուցէ պատերը վկչին: Տիկիններից շատերը լալիս էին, ցաւելով խեղճ երաժշտի վիճակի վրայ, որ նա չէր կարողանում այդ բուռն ծափահարութիւնները լսել: Այդ նուազահանդէսից նեթհովէնին զուտ արդիւնք մնաց 400 ֆլորին:

Թատրոնի ղեկավարը, տեսնելով այդ յաջողութիւնը, առաջարկեց նեթհովէնին կրկնել նուազահանդէսը և կանխիկ խոստացաւ 500 ֆլորին: Բայց անյաջող ժամանակ էին ընտրել, որովհետև ամբողջ հասարակութիւնն շտապում էր ամառա-

նոց երթալ և թատրոնը համարեա դատարկ էր: Բեթհովէնը շատ վիրաւորուած էր այդ բանից և բարեկամները համարեա ստիպմամբ փողն առնել տուին:

Դրանից յետոյ, Բեթհովէնը սկսեց 10-րդ սիմֆոնիան պատրաստել, և արդէն սկսել էր կոորդ-կտոր գրի առնել, որ 1824 թ. նա մի նարմակ ստացաւ Պետերբուրգից, իշխան Գոլիցինից, որ խնդրում էր միքանի կւարտետներ գրել պատրաստ լինելով նրա բոլոր պահանջները կատարելու: Բեթհովէնը պատասխաննեց, թէ ինքը արհեստաւոր չէ և երբ որ ոգետորութիւնը գայ—այն ժամանակ կը կատարի այդ առաջարկութիւնը,

Շուտով նա յօրինեց երկու կւարտետ օր. 130, որոնց վեմութիւնն ու գեղեցկութիւնը ժամանակակիցների հասկացողութիւնից ու ճաշակից վեր էր: Թէ նեթհովէնը շտապեց Պետերբուրգ ուղարկել այդ գրուածքները, բայց պատասխան չստացաւ: Զուր դի նեց խեղճ երաժշտը այդ մեծանուն իշխանին, որ աւելորդ էր համարում մինչև անդամ պատասխանել: Մի անգամ սկսելով մի որոշ

ուղղութեամբ, նրա ոգևորութիւնը շուտ չէր անցնում, և նա էլի մի կւարտեատ յօրինեց: 1826 թ., հոկտեմբերի վերջին, Բեթհովէնը աւարտեց այդ գրուածքը իւր եղբօր կալուածքում: Այդ հեղինակութեան adagio-ն նրա կենսագրներից շատերի ասելով, Բեթհովէնի վերջի գըրուածքն է եղել, որ համարեա աստուածային մտքեր է պարունակում իւր մէջ և արտաքինի կողմից իդէալական գեղեցկութիւն ունի:

1826 թ. սեպտեմբեր ամսին Բեթհովէնը քնակուեց Փան եղբօր մօտ, նրա կալուածքում, զիջանելով վերջինիս սաստիկ թախանձանքին: Առհասարակ մնա երաժիշտը այդ եղբօր հետ չէր կարողանում հաշտ ապրել և խուսափում էր միասին լինելուց, միայն այս անդամ փորձել ուզեց, բայց այդ փորձը նրան շատ թանգ նստեց: Եղբայրը նրան մի անբնակելի, ցուրտ սենեակում տեղաւորեց, որ աշնան եղանակում ամենենին չէին առաքացնում: Ժանը և նրա կինը այն ասաիման զայրացնում էին երաժշտին, որ համարեա կատաղութեան էին հաս-

ցնում նրան: Այդ տեղ նա ստոցաւ այն հիւանդութեան սաղմը, որը նրան անժամանակ դերեղման տարան: Նոյեմբերի վերջին այս չկարողանալով եղբօր մօտ դիմանալ, Բեթհովէնը հեռացաւ այնտեղից: Եղբայրը կամենալով դարձեալ պահել երաժշտին իւր կառքը չտուեց, ենթադրելով թէ այդպիսի չնշն միջոցով կը կարողանայ յետ պահել նրան իւր մտադրութիւնից: Բայց վիրաւորուած, հիւանդ, զայրացած խեղճ երաժիշտը առաջի պատահած սայլով վարձեց և սարսափելի անձրեին ճանապարհ ընկաւ: Նա սասաիկ ուժապատ եղաւ ճանապարհին, ուստի ստիպուեցաւ իջնել մի յետ ընկած պանդոկում, ուր ահազին քանակութեամբ սառը ջուր խմեց, որով հետեւ ներան այրուում էր, ինքն ևս հասկուալով իւր դրութեան վտանգաւոր լինելը, շտապեց վերդառնալ Վիեննա հիմնաւորապէս բժշկուելու համար, ապա թէ ոչ ամեն բան կորած էր. Հասնելով Վիեննա, նա իմաց տուեց իւր եղբօր որդուն, խնդրելով չուտով բժիշկ կանչել: Բայց Շարլը այնքան զբաղուած

էր թղթախաղով, որ միայն երեք օրից
յետոյ կարողացաւ հասցնել մի բժիշկ
անհամբեր սպասող հօրեղբօրը: Բարե-
կամներից ոչ ոք չգիտէր նրա վերա-
դարձը, և այդ էր պատճառը, որ նա բո-
լորովին մենակ էր, նրա մշտական բժիշկ-
ները նոյզէս չկային, իսկ նարլը ուղար-
կած բժիշկը բոլորովին սխալ էր հասկա-
ցել հիւանդութիւնը: Նրա տուած դեղե-
րը կատարելապէս թուլացրին Բեթհո-
վէնի ուժեղ կազմուածքը և ունե-
ցած ջրգողութիւնը աւելի ևս զարգացաւ:
Անմիջապէս բժիշկ Զէյրերաը վիրահա-
տութիւն կատարեց: Նրա վաղեմի ընկեր
Քրենինդի եղայր՝ երիտասարդ բժիշկը
չէր հեռանում Բեթհովէնի մօտից: Առաջի
անդամահատութիւնից յետոյ Բեթհովէնը
նամակ գրեց 9-րդ սիմֆոնիայի հրատա-
րակչին, հրահանգներ տալով նրա վերա-
բերեալ: Նա տանջւում էր, որովհետեւ գործ
չէր կարողանում կատարել: Թէի մինչև
10000 ֆլորին ունէր խնայած, բայց այդ
ժանր նիւթական դրութեան մէջ չէր ու-
ղում ձեռք տալ այդ փողին, որ իւր եղ-
բօր որդու համար էր: Միևնոյն ժամա-

նակ նամակի ձեռվ մի կատակ շինեց, որի
հինգ օր յետոյ հարկ եղաւ երկրորդ
անդամահատութիւն կատարել: Նըա
դրութիւնը մի քիչ թեթեացաւ, մանա-
ւանդ որ իւր վաղեմի ընկեր՝ բժ. Մալ-
ֆատին, որի հետ երկար տարիներ
կուռած էր, եկաւ իւր մօտ: Բեթհովէնը
շատ էր շտապում 10-րդ սիմֆոնիան
աւարտել, բայց հազիւ անցած էր մի
քանի օր ևս, ահա անհրաժեշտ եղաւ
երրորդ անդամահատութիւն կատարել:
Նա հասկացաւ, որ մահը մօտեցել է:
Անքնութիւնը նոյնպէս սաստիկ աանջում
էր նրան, ուստի բարեկամները աշխա-
տում էին նրան ցերեկները զրաղեցնել,
որ գոնէ գիշերները կարողանայ քնել: Այդ
ժամանակ մի ընծայ սասցաւ Լոնդոնի
իւր նոթաների հրատարակիչ Շառլմի-
ֆից Հենդեկի բոլոր գրուածքները:
Դա մի շքեղ հրատարակութիւն էր, որ
բաղկացած էր 40 հատորից: Բժիշկ Բրե-
նինը մէկ-մէկ հիւանդին տալիս էր այդ
հատորները որոնցից մեծ հրճուանք էր
վայելում նա: Ցանկարծ աշքը ընկաւ իւր
մատի անցրած բարակ ոսկի մատանու

վրայ, որ ընծայ էր ստացել պրուսիական թագաւորից. Ահա թագաւորական ընծայ», բացականչեց նա, մատնացոյց անելով Հենդելի գրուածքները: Իւր նիւթական նեղ վիճակը չափազանց անհանգստացնում էր իրեն և նա որոշեց դիմել անգլիացոց:

Լօնդօնի երաժշտական հասարակութիւնը մի ամիս առաջ կամեցել էր ի պատիւ և ի նպաստ Բեթհովենի մի նուագահանդէս սարքել և դիմել էր Բեթհովենին, բայց նա մերժել էր այն բանը:

Երաժիշտը կանչեց Շինդլերին և երկու նամակ թելաղրեց. մէկի մէջ իւր շնորհակալութիւնն էր յայտնում հրատարակիչ Շտումֆֆին, իսկ միւսի մէջ խնդրում էր Լօնդօնի երաժշտական ընկերութեանը իրեն օգնել, իսկ սուողանալուց յետոյ կարելի էր այդ ուզած նուագահանդէսը սարքել, և այդպիսով ինքը կը կարողանար լիովին հատուցանել իւր պարոքը: Փետրուարի 27-ին բժիշկը սահպուած էր չորորդ անդամահատութիւնը կատարելու: հասկանալով,

որ ամեն ինչ վերջացել է, Բեթհովենը խնդրեց Շարլին հաղորդել իւր անյուսալի գրութեան մասին, բայց եղբօրորդին, որ Վիեննայում չէր, աւելորդ համարեց մինչև իսկ գալ և տեսնել իւր մահամերձ անմիթար բարերարին: Այդ ժամանակ նորէն Վիեննա էր եկել Հումել երաժիշտը, որ, ինչպէս գիտենք, կուուած էր Բեթհովենի հետ: Երբ որ նա տեղեկացաւ մեծ երաժշտի հիւանդութեան մասին, շտապեց նրան այցելել: Բեթհովենը այնպէս նիհարել էր մէկը միւսին յաջորդող անդամահատութիւնների պատճառով, որ կատարեալ կմախքի էր նմանում: Հումելը տեսնելով նրա այդ ցաւալի գրութիւնը՝ չկարողացաւ իրեն զապել ու երեխայի նման սկսեց լալ: Բեթհովենը աշխատում էր նրան հանգստացնել ու մխիթարել:

Վերջապէս մարտի 1-ին նա ստացաւ Լօնդօնից 100 ֆունտ ստերլինգ (700—1000 ռ.) և ուրախութիւնից վէրքը նորից բացուեց: Նա չգիտէր, թէ ինչպէս իւր շնորհակալութիւնը յայտնի անգլիացոց, և Շինդլերին թելադրում էր

գրել, որ եթէ Աստուած իրեն առողջութիւն տայ, նա իւր ամբողջ տաղանդը կը գործածի անգլիացոց ցանկութեան համաձայն։ Բայց նրա տանջանքները այնքան սարսափելի էին, որ բոլոր բարեկամները ի սրտէ մահ էին ցանկանում նրան։ Մարտի 23-ին բարեկամների խնդրանօք նա իւր կտակը բոլոր կանոնների համաձայն կազմեց, և այնքան թոյլ էր, որ չէր կարող իւր ամբողջ աղդանունն իսկ ստորագրել։ Յետոյ կանչեցին քահանային և թեթհովէնը ուրախութեամբ խոստովանուեց ու ընդունեց ս. հաղորդութիւն։

Մարտի 24-ին նրա դրութիւնն աւելի ևս վատացաւ և սկսուեց հոգեվարքը, որ սաստիկ երկար տևեց. այդ ուժեղ կազմուածքը երկար պատերազմում էր մահուան դէմ։ Բարեկամները ոչ մի բոպէ չէին հեռանում նրանից։ Ամբողջ հետեւալ օրը, մարտի 25-ին շարունակուամ էր հոգեվարքը։ Մարտի 26-ին եղանակը հիանալի էր, բայց ժամը 4-ին սաստիկ մրրիկ բարձրացաւ. կայծակը փայլատակում էր, ամպի գոռոցը սաստկանում...

Յանկարծ կայծակը լուսաւորեց հիւանդի սենեակը։ Նա բարձրացաւ անկողնու վրայ, ձեռքը երկարացրեց և ապա շընչասպառ վայր ընկաւ։ Այդ բոլէին նրա մօս էր երաժիշտ Հուտենբըները, որ փակեց նրա աչքերը։ Այդ պատահեց ուղիղ ժամը 5-ին և 45 բոպէին, երեկոյեան։ Հենց այդ ժամանակ ներս մտան Շինդլէրը և Բըենինգը։

—Ամեն բան վերջացած է, ասաց Հուտենբըները։

—Փառք Աստուծոյ, որ վերջ տրուեց այդ սարսափելի տանջանքներին, պատասխանեց խորը զգացուած Բըենինգը։

Անթիւ և անհամար մարդիկ գալիս էին Վիեննայի բոլոր ծայրերից իրենց յարգանքը մատուցանելու մեծ մարդու դիսկին։ Թաղումը նշանակուած էր մարտի 29-ին, ժամը 3-ին։ 20,000-ից աւելի ամբոխ դագաղին էր հետեւամ։ Ութն երաժիշտներ տանում էին դագաղը։ Վիեննայի բոլոր երաժիշտները, մատենագիրները գնում էին դագաղի երկու կողքերից։ Նրա մահուդի վրայ չէին երեսում

շքանշաններ — Բեթհովէնը երբէք չէր
ստացել այդպիսիններ, բայց ամբողջ դա-
դաղը ծածկուած էր պստկներով ու ծա-
դիկներով։ Երաժիշտների ետևից գալիս
էր հոգեորականութիւնը և երգիչների
խումբը, որ Վերերի շարադրած խմբեր-
գըն էր երգում։ Դրանց ետևից գնում
էր երաժիշտների մի այլ խումբ, որ նուա-
գում էր Բեթհովէնի յօրինած խմբերից
այդ օրուայ համար յատկացուած միզե-
րերէն *). Երբ որ հասան Երրորդութեան
եկեղեցի, դագաղը դրին ամբիոնի վր-
ուայ և ամբողջ գնացքը ուղևորուեց գէ-
պի Վերինգի գերեզմանատուն և հազիւ-
մութը կոխելուն այնտեղ հասան։ Շատ
ճառեր խօսուեցան ու կարգացուեցան.
Ժողովուրդը խորը զգացուած էր։

Գերեզմանատնից ամենից վերջը դուրս
եկան Բեթհովէնի բարեկամները — Շինդ-
լէրը, Բըենին զը, Շուրերաը և Հումելը։
Նրանք մնացին մինչև որ գերեզմանա-
պեղը հողի վերջի կոյտը ածեց, տպա գը-

*). 51-ըդ շարականի սկիզբը, որի համար
երաժշտութիւն է յօրինուած (կաթոլիկաց եկե-
ղեցական ելաժշտութեան համար)։

նացին մօտակայ սլանդոկը։ Շուրերտ
տաղանդաւոր կոմպոզիտորը՝ խմեց Բեթ-
հովէնի ողորմաթեատր և իրենց չորսից
նրա կենացը, ով որ ամենից շուտ կը
հետեւի Բեթհովէնի օրինակին։

Բեթհովէնի գերեզմանը քաղաքի կող-
մըն է նայում։ Նրա վրայ կանգնած են
մի շիրմ և վրան կոթող։ Վերջինի վը-
րայ քանդակուած է քնար, թիթեռ՝ ան-
մահութեան նշան, վրան գրուած է ոսկի
տառերով միայն մեծ երաժշտի ազգա-
նունը։

1863 թ. Բոննի երաժշտական ընկե-
րութիւնը բանալ տուեց Բեթհովէնի գե-
րեզմանը և նրա նշանալի ամփոփե-
ցին արձինէ սափորի մէջ։ Այդ ժամա-
նակ նկարեցին Բեթհովէնի գանգը, և բո-
լոր նշանաւոր գանգաբանները հասա-
սեցին, թէ դա ժամանակակից ամենա-
նշանաւոր զլուխն է եղել։

1845 թ. Բեթհովէնի արձանը կանգ-
նեցին Բոննում — նրա ծննդավայրում։
Ամբողջ Գերմանիայում հանգանակու-
թիւն եղաւ, բայց գումարը այնքան փո-
քըր էր, որ գործը չէր կարող առաջ

գնալ: Այն ժամանակ մեծ երաժիշտ՝ Լիս-
տու առաջարկեց այն ամբողջ գումարը
տալ, ինչ որ պակասում էր: Այդպիսով
կառուցին արձանը, որ պատկերացնում է
Բեթհովենին կանգնած վերարկուով, գր-
րիչը ձեռքին: Պատուանդանի վրայ չորս
խորաքանդակ նկարներ այլաբանօրէն
ներկայացնում են սիմֆոնիան, եկեղե-
ցական երաժշտութիւնը, դրամատիքա-
կան երաժշտութիւնը և ֆանտազիան:
Վիեննայում ևս մի մեծ արձան է շինուած
1878 թուին:

Խոկ ամենամեծ արձանը, որ կերտած
էր Բեթհովենը ինքն իւր համար—այդ
նրա երկերն են:

Վ. Ե. Բ. Զ.



ՏՊԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ*

| Էջ | Տող | Սխալ | Աղյուղ |
|----|------------|-------------------|-------------------|
| 10 | 9 գ. | չքեղ | ամենալաւ |
| 16 | 8, 9, 10 » | լոռվել էին մի- | լոռվ էին միմեան- |
| | | մեանցից: երբ լու- | ցից, երբ լուգովի- |
| | | դովիկուը Վիեննա | կուը Վիեննա գնաց: |
| | | է գնում, երկան | Գտնուել են այն |
| | | են զալիս | |
| 17 | 1 » | դարձնում, | դարձնում գէպի գա- |
| | | | սը, |
| 22 | 1, 2 » | համարում, կրկին | համարում կրկին |
| 23 | 5 ն. | անմիջապէս քա- | միասին գնացին |
| | | շուեցին | |
| 24 | 4, 5 գ. | Գելենիկի | Գելինեկի |
| 27 | 10, 11 » | մտքերով և քննա- | մտքերով և միան- |
| | | դատի կարծիքով | գամայն |
| | | միանդամայն | |
| 28 | 6, 7 » | չէր դարձնիլ | չի դարձրել |
| 30 | 3 » | փառքով վերադառ- | փառքով վերադառ- |
| | | նալ: | նալ հայրենիք: |
| 30 | 10 ն. | գողում: | գողում: |
| 36 | 11 » | funebre:) | funébre): |
| 37 | 11 » | ուրախութեան | ուրախութեան վրայ: |

*.) Բացի այստեղ նշանակածներից միւս
բազմաթիւ կէտադրական և այլ սխալների հա-
մար ընթենրցողից ներողութիւն ենք խնդրում:

Օր. Մ. Բ.

| | | | |
|----|----------|--------------------|------------------------------|
| 37 | 5 կ. | սպանական | երիտասարդ |
| 40 | 4 » | թիոկէլ | թիոկէլ |
| 43 | 5, 6 » | ֆրանչիսկա | ֆրանչիսկա |
| 44 | 11 » | երաժշտութիւններ | երաժշտութիւն |
| 59 | 5 ն. | չըջանակի | չըջանակի |
| 59 | 2 » | անմերն եմ, | ամենն եմ, |
| 60 | 8 կ. | արտիստ | արտիստ |
| 61 | 8 » | հասարակութիւնը: | հասարակութեանը: |
| 62 | 3 » | վերջին մասը | վերջին մասի եղանակը |
| 63 | 5 » | նոթերում | նոթերում |
| 65 | 6 » | իսկ | իսկ բացի |
| 65 | 4 ն. | միջակ ուժերով | փոքր միջոցներով |
| 73 | 6 կ. | արտգ) | արտգ) |
| 73 | 7, 8 » | հասարակութիւնը: | հասարակութեանը: |
| 74 | 12 » | մայն | միայն |
| 74 | 14, 15 » | առաջի | առաջին |
| 75 | 9 ն. | Մոշուխու | Մոշելէս |
| 77 | 4 » | Լինդելը | Ծինդելը |
| 78 | 11 » | երք | երեք |
| 78 | 8 » | սիրելին» | սիրելիին» |
| 82 | 4 կ. | գիեստ | գեիստ |
| 84 | 7 » | բոլոր թատրոններում | Վիեննայի բոլոր թատրոններում: |
| 94 | 7 » | զարլլ | զարլի |
| 99 | 12 » | տրուեց | տուեց |

39

J

Գինն է 25 կ. ճանապարհածախով:
թիթիչ 34. ցորես
Դիմել «ԿԵԶՈՐԻՆԱԿԱՆ ԳՐԱՎԱԾՈՅՑ»:

789
F-42F



2366

0010867

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0010867

